Գլխաւոր էջ

ՈՂՋՈ՛ՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 20-ԱՄԵԱԿԻՆ

ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 20-ԱՄԵԱԿԸ ՆՇՈՒԵՑԱԻ ՓԱՌԱՀԵՂ ՇՈՒՔՈՎ

«Հայաստանը դո՛ւ ես» կարգախոսով եւ «2011» յատուկ տարբերանշանով՝ ըստ արժանւոյն նշուեցաւ Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 20-ամեակը՝ զօրահանդէսով, «հանրապետական մաղթանքով», Մատենադարանի նոր մասնաշէնքի բացումով, դասական համերգով եւ այլ ձեռնարկներով: Անկախութեան տօնի գլխաւոր միջոցառումը մեկնարկուեցաւ Հանրապետութեան հրապարակին վրայ կայացած զօրահանդէսով: Այնուհետեւ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ «հանրապետական մաղթանք»: Երեկոյեան, հրապարակին վրայ կազմակերպուեցաւ աննախադէպ ձայնալուսային ներկայացում եւ հրավառութիւն: Համերգին կենդանի հնչողութեամբ մասնակցեցան Հայաստանի պետական ֆիլհարմոնիք նուագախումբը՝ գեղարուեստական ղեկավարութեամբ Է. Թոփչեանի, Հայաստանի ակադեմիական երգչախումբը՝ գեղարուեստական ղեկավարութեամբ Յ. Չեքիճեանի, Հայաստանի Հանրապետութեան նախագահի պատուոյ պահակախումբի փողային նուագախումբը՝ գեղարուեստական ղեկավարութեամբ Ա. Պօղոսեանի եւ « Փոքրիկ երգիչներ» երգչախումբը՝ գեղարուեստական ղեկավարութեամբ՝ Տ. Հեքեքեանի: Համերգը եզրափակուեցաւ Ռոպերթ Ամիրխանեանի «Երդւում եմ հայրենիքիս» ստեղծագործութեամբ: Կազմակերպիչները որոշապէս յարգեր էին տօնի խորհուրդը, նշանակութիւնն ու դերը, եւ համապետական միջոցառմանը՝ տեղական «աստղիկները» չէին՝ թուրքա-արաբախառն երաժշտութիւններով ու անգրագէտ տեքստերով: «Աստղիկներն» այդ օրը եղան մարզերու մէջ, ուր բացի «աստղիկներու»

համերգներէն՝ բացուեցան ցուցահանդէսներ, տեղի ունեցան, մշակութային միջոցառումներ:

Անկախութեան տօնը նշանաւորուեցաւ Մատենադարանի նոր մասնաշէնքի, օդակայանի նոր տերմինալի, հեծանուավազքի հրապարակի եւ Փոքր Մհեր կրթական համալիրին ռազմական-մարզական կեդրոնի բացմամբ: ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ, Անկախութեան 20-րդ տարեդարձի միջոցառումներու գլխաւոր համակարգող Վիգէն Սարգսեանը փոխանցեց, որ Մատենադարանի նոր մասնաշէնքը չափերով երեք անգամ կը գերազանցէ նախկինը: Նոր կառոյցը կ'առանձնանայ նաեւ տեխնիկական յագեցուածութեամբ եւ գեղագիտական ճաշակով: Մատենադարանի ներկայիս շէնքը պիտի վերածուի թանգարան-ցուցասրահի եւ պիտի անցնի վերանորոգման փուլ՝ յաւուր պատշաճի ներկայանալու համար՝ «Երեւանը գիրքի միջազգային քաղաք» տօնակատարութեան:

Սեպտեմբերը ընդհանրապէս յագեցած էր մշակութային բազմաբնոյթ միջոցառումներով, որոնք ցարդ կը շարունակուին: Առանձնապէս նշենք, որ Հայաստանի պատմութեան թանգարանին մէջ բացումը կատարուեցաւ «Հայաստանի երեք հանրապետութիւնները» խորագիրով մեծ ցուցահանդէսին: Հայաստանի կեդրոնական դրամատունը հդապարակեց յատուկ արծաթեայ մետաղադրամ 300 օրինակով, եւ հրատարակուեցան 20-ամեակին նուիրուած դրոշմաթուղթեր: Գեղագիտութեան ազգային կեդրոնը նախապատրաստած էր «Անկախութիւնը փոքրիկներու աչքով» մանկական նկարներու համահայկական մրցոյթը:

20-ամեակը նշեցին նաեւ սփիւռքի գաղթօճախներուն մէջ: Աշխարհահռչակ երգիչ Շառլ Ազնաւուրի Փարիզի «Օլիմփիա» համերգասրահին մէջ կայացած համերգը կը նուիրուի Հայաստանի անկախութեան 20-ամեակին: Պելճիգայի, Գերմանիոյ եւ Հոլանտայի մէջ, համերգներով հանդէս կու գայ Հայաստանի երիտասարդական նուագախումբը: Կը կազմակերպուին նաեւ երիտասարդ լուսանկարիչներու,

ժամանակակից գեղանկարիչներու անհատական ցուցահանդէսներ: Հայաստանի դիւանագիտական ներկայացուցչութիւնները կը կազմակերպեն ընդունելութիւններ, իսկ ձեռնարկներ կը կազմակերպեն հայկական սփիւռքի կառոյցները:
Սեպտեմբեր 21-ին նշուեցաւ նաեւ՝ ամենամեայ աւանդոյթ դարձած Երեւանի օրը: Մայրաքաղաքի բոլոր համայնքներուն մէջ, կ'իրականացուին տօնական ձեռնարկներ, տօնավաճառներ, կը կազմակերպուին բազմատեսակ երաժշտական հանդէսներ:

Սփիւռքի կազմակերպութիւններու ղեկավարներու և ներկայացուցիչներու համահայկական համաժողովի հանդիսաւոր նիստը

Սեպտեմբեր 19-ին Երևանի մարզահամերգային համալիրի հանդիսութիւններու դահլիճին մէջ՝ իր աշխատանքը սկսաւ Սփիւռքի կազմակերպութիւններու ղեկավարներու և ներկայացուցիչներու համահայկական համաժողովը:

Հանդիսաւոր նիստին ներկայ էին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեանը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ-ն, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա-ը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Բակո Սահակեանը, Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ պատրիարք Ներսէս Պետրոս ԺԹ-ն, Հայ աւետարանական եկեղեցիներու համաշխարհային խորհրդի նախագահ վերապատուելի դոկտոր Մկրտիչ Մելքոնեանը, ՀՅԴ բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեանը, ՍԴՀԿ կեդրոնական վարչութեան ատենապետ Մեդրակ Աճեմեանը,

ՌԱԿ կեդրոնական վարչութեան ատենապետ Մայք Խարապեանը, ՀՀԿ և ՌՀՄ նախագահ Արա Աբրահամեանը:
Համաժողովին մասնակցեցան 46 երկիրներէ ժամանած Սփիւռքի 151 կազմակերպութիւններու 550 ղեկավարներ և ներկայացուցիչներ:
Հանդիսաւոր նիստին՝ բացման խօսքով հանդէս եկաւ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Սերժ Սարգսեանը:
Ողջունելով և շնորհաւորելով Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 20-րդ տարեդարձի առթիւ, Հայաստանի Հանրապետութեան Նախագահը համաժողովի մասնակիցներուն ուշադրութիւնը հրաւիրեց Հայրենիք-Սփիւռք գործակցութեան հետ առնչուող այն հիմնախնդիրներուն վրայ, որոնք կենսական են Հայրենիքի և Սփիւռքի հզօրացման, ազգային միասնութեան, Ցեղասպանութեան ճանաչման, հայապահպանութեան համար:
Ընդգծելով Սփիւռքի դերը Հայրենիքի զարգացման գործէն ներս՝ ՀՀ Նախագահը նշեց նաև, որ «Սփիւռքը նաև մեր ցաւն է», իսկ «ամենաազդեցիկ միջոցը Սփիւռքի ուծացման դէմ պայքարում՝ Հայաստանի հզօրացումն է», «Սփիւռքն ու Հայաստանը պէտք է դառնան միմեանց շարունակութիւն», «Միայն վերածնուած Հայրենիքի հզօրացմամբ կարելի կը լինի դիմագրաւել կլոպալացումից բխող ուծացման վտանգին, ինքնութեան կորստին»: ՀՀ Նախագահը շեշտեց նաև, որ «Ազգի իղձերն ու Հայաստանի ճակատագիրը միացնում են հայ ժողովրդին: .... վաղուայ Հայաստանը պէտք է տեսնել աւելի հզօր ու բարեշէն, հայ ժողովուրդը՝ կուռ ու միասնական»:
Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանը եզրափակեց իր ուղերձը «համաժողովին արդիւնաւէտ աշխատանք և առարկայական արդիւնքներ» մաղթելով:
Այնուհետև, համաժողովին իր օրհնութեան խօսքն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ-ն՝ նշելով՝ «ժողովուրդներն ապրում և գոյատևում են իրենց Հայրենիքով, իսկ Հայրենիքը՝ իր զաւակներով»:
Անդրադառնալով համազգային նշանակութեան խնդիրներին՝ Հայաստանի հզօրացում, Արցախի ճանաչում ու բարօրութիւն և Ցեղասպանութեան ճանաչում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շեշտեց,- «Պահանջատիրութիւնը մեր ժողովրդի հոգու պարտքն է մեր նախնեաց յիշատակի և Աստծոյ առջև»:
Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա-ն կոչ ըրաւ ներկաներուն գործնական քննարկումներ ընել և «առաջնորդուիլ ապագայի տեսիլքով», քանզի տասնամեակներ շարունակ «անկախութեան ոգիին ճառագայթով, անկախութեան բաղձանքով երազեցինք ու ապրեցանք, իսկ այսօր միայն անցեալին նայելու և հպարտանալու օր չէ »:
Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա-ը նշեց, որ ազգի միասնականութիւնը վկայելու առումով, կենսական են համազգային խնդիրներու քննարկումները, իսկ որպէս ուղեցոյց նշեց «Հայրենիք-Սփիւռք գործակցութիւնը»՝ որպէս ազգի համար առաջնահերթ կարևորութեան խնդիր,որուն համար անհրաժեշտ է իրապաշտ մօտեցումով փաստել ազգի ողջ կարողութիւնը: Եթէ «Հայաստան-Սփիւռք գործակցութիւնը համահայկական տեսլականով չէ գունաւորուած, այն իրատեսական չէ: Անհրաժեշտ են համահայկական մօտեցումներ, դուրս գալ «Մենք» և «Դուք»-ի գիտակցութենէն և անցնիլ հաւաքական

«Մենք»-ի գիտակցմանը»,- շեշտեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ Արամ Ա-ը:
Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ Արամ Ա-ը անդրադարձաւ նաև Հայաստանը մեծապէս ջլատող, արտագաղթի երևոյթին, նշելով, որ դարեր ի վեր օտարներու բաղձանքն է Հայաստանը տեսնել առանց հայերու, ուստի անհրաժեշտ է «առաջքն առնել» այս երևոյթին, բարելաւել ժողովուրդի կենցաղային պայմանները, մշակել և իրականացնել բարեփոխումներու յստակ ծրագիրներ:
Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ Արամ Ա-ը առանձնակի անդրադարձաւ Ցեղասպանութեան ճանաչման և 100-րդ տարելիցին, նշելով Հայաստանի դերը՝ պետական մօտեցմամբ ու ոճով:
Այնուհետև, համաժողովի մասնակիցներուն ողջունեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Բակօ Սահակեանը, Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ պատրիարք Ներսէս Պետրոս ԺԹ-ն, Հայ աւետարանական եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի նախագահ վերապատուելի դոկտոր Մկրտիչ Մելքոնեանը:
ՀՅԴ բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեանը ներկաներուն խոստացաւ «անզգուշութեան աստիճանի բաց ու անկեղծ» ըլլալ: Անդրադառնալով Հանրապետութեան մէջ հասարակութեան բևեռացուածութեան՝ բանախօսը շեշտադրեց, որ այս հանգամանքը կարող է ատելութիւն յառաջացնել նոյնինքն Հայրենիքի նկատմամբ, քանի որ իշխանութիւնները հնարաւորութիւն չեն տար հասարակ քաղաքացիին հպարտանալու իր Հայրենիքով: Ան մտահոգութիւն յայտնեց, որ երկրին մէջ առկայ ընկերային վիճակը, կոռումպացուածութիւնը և միւս բացասական երևոյթները կարող են մեր մէջ սպանել Հայրենասիրութիւնը և կոչ ըրաւ կատարել համակարգային արմատական փոփոխութիւններ:

Համայնքային

Ուսումնական Բարի՛ Տարի, Սիրելի Նարեկցիներ

8 Սեպտեմբեր 2011: Ուսումնական տարեմուտի առաջին օրն է Կիպրոսի Նարեկ Վարժարաններուն համար: Բոլորը՝ աշակերտ, ուսուցիչ եւ ծնող կը շտապեն դպրոց: Սովորականէն բոլորովին տարբեր մթնոլորտ կը տիրէ Նարեկէն ներս...ամառնային երկար արձակուրդէն ետք, վերահանդիպումը ընկերներու եւ ուսուցիչներու հետ ընտանեկան ջերմութիւն ունի, մինչ մատղաշ նորեկներու մօտ ալ, զգալի է ներքին շփոթը, անծանօթ միջավայրին առթած վարանումը...: Դպրոցը նոր կեանք առած է աշակերտներու գոռում-գոչիւնով, խօսք ու զրոյցով, վազք ու խաղով...:

Գեղեցիկ եւ իմաստալից աւանդոյթով, կրթական տարին կը սկսի դպրոցին կից, Ս. Աստուածածին Մայր եկեղեցւոյ մէջ կատարուած արարողութեամբ: Տէր Մոմիկ քահանայ Հապէշեան իր բարեգալուստի խօսքին մէջ կոչ կ'ընէ աշակերտութեան որ գիտակից ըլլան այն նպատակին, որուն համար կը յաճախեն հայկական վարժարան, որովհետեւ հայ աշակերտը միայն գիտելիք կամ լեզուներու հմտութիւն ձեռքբերելու համար չէ որ կը գտնուի այնտեղ, այլեւ՝ մասնաւորաբար, սորվելու մեր Մեսրոպատառ հայերէն լեզուն ու պատմութիւնը, մեր երգերն ու շարականները, հաղորդ դառնալու մեր մշակոյթի գանձերուն, Լուսաւորչեան հաւատքին ու հայրենիքին, մեր ազգային ազատագրական պայքարի հերոսներու ոգիին ու շունչին հետ, կ'ընդգծէ ան: Ապա բոլորը միաբերան կ'երգեն «Հայր Մեր»ը եւ հաւաքաբար կ'ուղղուին Նարեկ վարժարանի ընդարձակ սրահը, ուր տեղի կ'ունենայ 2011-2012 ուսումնական նոր տարեմուտի պաշտօնական բացման կարճ, բայց իմաստալից հանդիսութիւնը:

Յունարէն լեզուի աւագ ուսուցչուհի Տիկ. Անկելա Սավա կ'ընթերցէ Կրթական Նախարարութեան պատգամը ուղղուած Կիպրոսի Հանրապետութեան բոլոր ուսանողներուն: Կրթական նախարար Տիար Եորդոս Տիմոսթենուս իր պատգամին մէջ, յատկապէս կը շեշտէ այն հանգամանքը, որ իւրաքանչիւր դպրոց ըլլալու է՝ ապագային ուղղուած յոյսի եւ կառուցողական վայր մը կիպրական հայրենիքին համար: Ան կը վստահեցնէ որ այդ ուղղութեամբ ներդրուած բոլորին ճիգերը անպայմանօրէն յաջողութիւն պիտի գտնեն: Կը վստահեցնէ, նմանապէս, որ կրթական Նախարարութիւնը պիտի ըլլայ բոլորին կողքին եւ՝ զօրավիգ տարուած աշխատանքին, «որպէսզի յառաջ երթանք աւելի ապահով ու յաղթական՝ այն բոլոր փոփոխութիւններուն ըմդմէջէն, որոնց պէտք ունի մեր կրթութիւնը...եւ կարենաք վառ պահել ձեր ժպիտը դպրոցէն ներս», կ'եզրափակէ ան:

Հոգաբարձութեան ատենապետ Տիար Վարդան Թաշճեան նոյնպէս բարի գալուստ կը մաղթէ՝ աշակերտութեան, ուսուցչական կազմին, պաշտօնէութեան, ծնողներուն, տնօրէնութեան եւ հոգաբարձութեան, որպէսզի բոլորը՝ ամառուան արձակուրդէն ետք լծուին աշխատանքի, անգամ մը եւս կ'ընդգծէ Նարեկ վարժարաններու առաքելութիւնը՝ լաւ մարդ ու քաղաքացի պատրաստելու գծով: Ան իր խօսքին բանալի միտքը կը յայտնէ, մէջբերելով Ֆրանսացի մեծ գրող Վիքթոր Հիւկոյի խորիմաստ տողերը՝ «Մեռնիլը չէ ամէնէն սոսկալին, այլ՝ ապրիլ չկարենալը»: Իսկ ապրիլը, կը պատգամէ ան, արուեստ է, եւ կ'ենթադրէ արժեւորել սեփական անձի բոլոր կարելիութիւնները յանուն առաքելութեան մը իրագործման: Ան կ'աւելցնէ որ Նարեկ վարժարանները կը ստեղծեն բոլոր պայմանները, ուր աշակերտը կարենայ զարգացնել իր կարողութիւնները: Ան իր խօսքը կ'եզրափակէ, յայտնելով որ Հոգաբարձութիւնը միշտ զօրավիգ պիտի ըլլայ իրենց ջանքերուն եւ հուսկ կը մաղթէ ուսումնական արդիւնաբեր եւ բարի տարի:

Խօսք կ'առնէ նաեւ տնօրէնուհի Տիկ. Վերա Թահմազեան եւ, բարի վերամուտ մաղթելէ ետք, խօսքը աշակերտութեան ուղղելով, կ'ըսէ ի մասնաւորի. «Սիրելի աշակերտներ, Նարեկ վարժարաններու առանձնաշնորհեալ պայմաններուն տակ, դուք պիտի սորվիք մեր լեզուն, պիտի ծանօթանաք մեր պատմութեան եւ մշակոյթին: Մեր վարժարանները յառաջադէմ միջոցառումներով պիտի յաջողին հաւասարակշռել արդիական զարգացումը եւ հայապահպանման ճիգը: Քայլ պահելով դարուս արագընթաց յառաջդիմութեան հետ եւ հետեւելով Կրթական նախարարութեան արդի նպատակներուն՝ պիտի հրամցնեն հաճելի եւ ստեղծագործական ուսուցման միջավայր մը: Մեր գլխաւոր նպատակը կը մնայ դաստիարակել լաւ հայը եւ լաւ քաղաքացին, պատրաստել երեք լեզուներով արտայայտուելու հմտութիւնը ունեցող, գիտակից եւ ընկերային գետնի վրայ ինքնավստահ աշակերտը, որ պիտի դառնայ վաղուայ առողջ մտածելու

կարողութեամբ օժտուած, գործունեայ հայ երիտասարդը, ազգային գործիչը կամ ղեկավարը»:

Բացման արարողութենէն ետք, բոլոր աշակերտներն ու ուսուցիչները կ'ուղղուին իրենց դասարանները եւ սկիզբ կ'առնէ ուսումնական նոր 2011-2012 տարեշրջանը: Նոր կրթաշրջանի սեմին, սրտագին կը մաղթենք ուսանողներուն եւ կրթական մշակներուն՝ ուսումնական բեղուն, արդիւնաբեր եւ բարի տարի, նորանոր յաջողութիւններով լեցուն...:
Ե. Գ.

ՈՒՐԱԽՈՒԹԵԱՄԲ ԻՄԱՑԱՆՔ ԹԷ՝

ՀՀ անկախութեան 20-րդ տարեդարձին առիթով, ՀՀ Նախագահի Հրամանագրով, կիպրահայ համայնքի Պետ. Ներկ. Տիար Վարդգէս Մահտեսեան պարգեւատրուած է «Մխիթար Գոշ» շքանշանով՝ «հայապահպանման գործում ներդրած ծանրակշիռ աւանդի, հայրենիքին մատուցած ծառայութիւնների, ինչպէս նաեւ Հայաստանի Հանրապետութեան եւ օտարերկրեայ պետութիւնների միջեւ բարեկամութեան ամրապնդմանը մեծապէս նպաստելու համար»: (ըսուած է Հրամանագրին մէջ) Այս ուրախ եւ պատուաբեր առիթով, ջերմօրէն կը շնորհաւորենք Պետական Ներկայացուցիչ Տիար Վարդգէս Մահտեսեանը, իրեն մաղթելով հայրենանուէր բեղուն գործունէութեան երկար եւ արեւաշատ տարիներ:

ՆԱՆՈՐ ԹԱՇՃԵԱՆԻ ՆՈՐ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ

Գոյներու եւ Ձեւերու Հրավառութեամբ

Երկուշաբթի 19 Սեպտեմբեր, 2011-ին՝ Opus 39 Gallery-ի մէջ, տեղի ունեցաւ կիպրահայ գեղանկարիչ Նանոր Թաշճեանի ցուցահանդէսի բացումը՝ Ocean Deep վերտառութեամբ, ներկայութեամբը՝ հայ, կիպրայոյն թէ օտար արուեստասէր հոծ բազմութեան մը:
Նանոր Թաշճեան ծնած է Նիկոսիա, Կիպրոս: Շրջանաւարտ է Նիկոսիոյ Ֆրէտէրիք համալսարանէն, ուրկէ ստացած է իր Պսակաւոր Արուեստից վկայականը՝ արուեստի համապատասխան բնագաւառէն ներս (B.A. in Graphic Arts & Design): Իր ուսումնառութիւնը շարունակած է Քարտիֆի Wales համալսարանին մէջ, տիրանալով M.A. in Fine Arts տիտղոսին՝ 2002-ին:

Նանոր Թաշճեան իր արուեստի գործերը ներկայացուցած է բազում անհատական թէ խմբային միջազգային ցուցահանդէսներու մէջ: Իր ցուցահանդէսները կայացած են Միացեալ Թագաւորութեան, Կիպրոսի, Սիտնէյի եւ Պանկքոքի մէջ: Նորագոյն այս ցուցահանդէսով, Նանոր Թաշճեան հարազատօրէն կ'արտայայտէ իր անշէջ սէրը Միջերկրական ծովուն խոր կապոյտին եւ ամառնային վառ գոյներուն հանդէպ: Սրահի մուտքէն իսկ, այդ տաք ու բաբախուն գոյներու ճառագայթումը կը գրաւէ դիտողին հայեացքը եւ կ'առինքնէ զայն...: Ահա թէ ինչու ցուցահանդէսը կը կրէ «Ովկիանոսային խորութիւն» կամ Ocean Deep յատկանշական խորագիրը: Զարմանալու ոչինչ կայ, որովհետեւ ան, մեծցած ըլլալով Կիպրոսի գեղածիծաղ ափերուն վրայ, միշտ ալ հիացած ու լիացած է Միջերկրական ծովուն գոյներով ու հրաշալիքներով, արեւի ոսկեզօծ լոյսով, զանոնք յաւէտ դրոշմելով իր հոգեկան ու ենթագիտակից ներաշխարհին մէջ...:
Այսպէս, գոյնզգոյն ձուկեր, ծաղիկներ, բոյսեր, մարդկային դէմքեր ու կենդանակերպեր ... կեանք ու շունչ կու տան Նանորի գերիրական նկարներուն եւ

կը ստեղծեն երազային աշխարհ մը, որ յայտնապէս կը բաբախէ սիրովն ու կարօտովը իր ծննդավայրի եզերքներուն...: Ուշագրաւ է իր երազային երեւակայութեան թռիչքը, որ ներդաշնակօրէն իրարու կը միաձուլէ իր օգտագործած տարբեր նիւթերը ինքնաբուխ մտայղացումով մը...:
«Կը սիրեմ փորձարկել տարբեր մեթոտներու եւ նիւթերու հետ, իրարու խառնել աքրիլիքը, ներկամատիտը, թուղթը, սոսինձը... այն ամէնը, որ կրնայ ստեղծել հետաքրքրական բաղադրութիւն մը՝ գոյնի, հիւսուածքի եւ ոճի: Իմ արուեստս միջոց մըն է արտայայտելու անձս, խուզարկելու, պեղելու մտքերս, երեւակայութիւնս եւ երազներս», կը նշէ արուեստագէտը ակնյայտ անկեղծութեամբ:
Հեքիաթային երփներանգ աշխարհ մըն է, որ կը պարզուի հայեացքիդ դիմաց...Աշխարհ մը՝ որ ծնունդ կ'առնէ Նանորի ենթագիտակից խորունկ ներաշխարհէն եւ, շնորհիւ իր ստեղծագործ երեւակայութեան, արտայայտութիւն կը գտնէ՝ գոյներու, գիծերու եւ կերպերու հարուստ համադրութիւններով...:
Նանորը, ինք եւս, բացատրութիւններ տալով իր արուեստի ցուցադրուած գործերուն մասին, կը յայտնէ ինծի որ իր հոգեկան տրամադրութիւնը՝ ներքին խաղաղութիւն, յուշերու ալեկոծում, բաժանման կսկիծ, ուրախութիւն թէ տրտմութիւն՝ ինքնաբուխ անմիջականութեամբ արտայայտութիւն կը գտնէ գոյներու այլազան երանգներով, ուր կը տիրապետեն ամառնային վառ գոյները, ինչպէս նաեւ տարբեր խորհրդանիշներու միջոցով՝ ձուկեր, ծաղիկներ, մարդկային դէմք, աչքեր, կատուներ..., որոնց մէջ տիրապետողը ձուկերն են միշտ..., , կարծէք անոնք ըլլային իրեն համար կեանքի եւ կենսունակութեան, յոյսի եւ լոյսի գերագոյն խորհրդանիշ...:
Այս տպաւորիչ ցուցահանդէսին առիթով, կը շնորհաւորենք սիրելի Նանորը, իրեն մաղթելով գեղարուեստական նորանոր յայտնաբերումներ եւ յայտնագործութիւններ...:
Երան Գույումճեան

ԿԻՊՐԱՀԱՅ ԱՆՑԵԱԼԷՆ ԱՐՇԱՒԻՐ ՊԷՐՊԷՐԵԱՆ

Արշաւիր Պէրպէրեան ծնած էր Մեծ Եղեռնի տարին՝ 1915 Յունուար 4-ին, Կեսարիոյ Համիտիէ գիւղաքաղաքը: Զաւակն էր Կարապետ Պէրպէրեանին, որ հարցաքննիչ դատաւորի պաշտօն կը վարէր Օսմանեան Կայսրութեան թէ Իթթիհատական Իշխանութեան օրերուն: Սակայն ան զոհ կ'երթար նոյնինքն կառավարութեան նախաձեռնած Մեծ Եղեռնին: Նոյն ճակատագրին արժանացած էին իր հարազատները մեծ մասամբ:
Փոքրիկ Արշաւիր վեց ամսու մանուկ հասակին կը յանձնուի յոյն ընտանիքի մը խնամքին, պայմանով որ ան յանձնուէր տարագրութենէն վերադարձող ողջ հարազատի մը: Անզաւակ յոյն այդ ընտանեկան յարկէն ներս ան կը ստանայ լա՛ւ խնամք: Ու նախախնամութեան հրաշքով ալ, մայրը 1920-ին Տէր Զօրէն կը դառնար Կեսարիա եւ շատ դժուարութեամբ, գիշերով զինք փախցնելու ի գին, կը վերամիանար իր զաւկին: Յուզումի ի՛նչ պահեր...: Ողբերգութիւ՛ն:
1923-ին Թալասի ամերիկեան որբանոցին հետ կը հասնի Պէյրութ իր երկու քոյրերուն հետ եւ անմիջապէս կը մտնէ Ճիպէյլի որբանոցը, ուր կը մնայ մինչեւ 1925:
Արդէն տասը տարեկան կը մեկնի իր հօրեղբոր հետ Դամասկոս, ուր տարի մը կը յաճախէ տեղւոյն ազգային վարժարանը: 1927-էն 1933 տարիներուն կը մնայ Պէյրութ: Յաջորդաբար կ'ուսանի Ս. Նշան ազգային վարժարանը, որ այդ տարիներուն կը մնար տակաւին Երուսաղէմի Պատրիարքութեան իշխանութեան ներքոյ: Ապա պատանի Արշաւիր կը յաճախէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ հայ Յիսուսեան հայրերու ճեմարանը, որ այդ տարիներուն իրապէս եղած էր լուսոյ վառարան մը թշուառ հայ գաղթականութեան համար եւ վերջապէս՝ արհեստակցական «Արթ է Մեթիէ» գոլէճը:
19 տարեկան երիտասարդ Արշաւիր Պէրպէրեան 1934-ին, իր մօր ընկերակցութեամբ, առաջին անգամ ըլլալով ոտք կը դնէ Լառնաքայի նաւամատոյցը: Անմիջապէս կը դիմէ քաղաքի հայկական ազգային վարժարան, ուր կը դասաւանդէ գծագրութեան դասեր: Ահա՛ ազգային հասարակական կեանքը կը սկսէր գեղեցիկին հանդէպ ունեցած իր սիրով՝ արուեստով եւ այդ սէրը կը մնար ու կը քալէր իր հետ բովանդակ իր ազգային հասարակական կեանքին հետ:
Ու այդպէս ալ կեանքի իր ասպարէզը ընտրած Արշաւիր 1935-ին կը դառնար առաջին գծագրիչը «Սիթա»ի (Cyprus Inland Telecommunication Authority), ուր կ'աշխատակցի ամբողջ 33 տարիներ: Կը սորվի անգլերէն եւ յունարէն լեզուները ինքնաշխատութեամբ: 1960-ին կը դառնայ տնօրէնը «Սիթա»ի:
Արշաւիր Պէրպէրեան կը կազմէ իր ընտանեկան բոյնը 1943-ին՝ ամուսնանալով Անահիտ Մտաճումեանի հետ եւ կը բախտաւորուի երկու դուստրերով՝ Սեւան եւ Վանուշ:
Արշաւիր Պէրպէրեան ունէր 20-րդ դարու հետ քալող յառաջդիմական տեսութիւններով ընկերային համոզումներ: Տնտեսական կեանքի մէջ, ինչպէս որ ՌԱԿ-ի ընդհանուր ուղեգիծը կը դաւանի, ան կը հաւատար արդար եւ արագ յառաջդիմութեան ու կը հակառակէր, որ մեծ դրամատէրերը մենաշնորհներու միջոցով տիրապետեն հրապարակին եւ գործատէրեր ոտնակոխեն աշխատաւորներու շահերը: Ու այս տեսութիւններէն անդին երթալով, կը քաջալերէր կազմակերպումը աշխատաւորական միութեանց, իրենց իրաւունքներու պաշտպանութեան համար ժողովրդավարականօրէն:
1956-ին Արշաւիր Պէրպէրեան կը կազմակերպէ Կիպրոսի Աշխատաւորական

Սենտիքան եւ կը ստանձնէ ընդհանուր քարտուղարի պաշտօնը: Այնքա՛ն մը առաջ կ'երթայ ան ընկերային արդարութեան ի խնդիր իր համոզումներուն մէջ, որ 1957-ին կը մասնակցի Ֆլորանսի (Իտալիա) մէջ կայացած աշխատաւորական համաժողովին:
Պէտք է նշել որ Կիպրոսի մէջ միշտ զօրաւոր ներկայութիւն մը եղած է երկրին Համայնավար կուսակցութիւնը, որուն կը պատկանի երկրին ներկայի նախագահը: Բացի այդ, Արշաւիր Պէրպէրեանի համոզումներուն մէջ ամրօրէն ներդաշնակուած կը մնար մեր հայրենիքին՝ Սովետական Հայաստանին հասարակարգն ու ընկերային կեանքը:
Այս ամբողջէն անդին, Ա. Պէրպէրեան եղած է հայ համայնքի պատասխանատու վարիչներէն մին: Բազմաբնոյթ է եղած անոր ծառայութեան դաշտը: Հայկական Ակումբի ատենապետ, ՀԲԸՄի մասնաժողովի վարչութեան ատենապետ, հայ վարժարաններու (Մելիքեան-Ուզունեան...) հոգաբարձութեան ատենապետ: Շրջան մը (1966-1967) Մելգոնեան Կրթական Հաստատութեան հոգաբարձութեան փոխ-ատենադպիր եւ հայկական հարցերու վարչութեան անդամ: Ու այս ամէնէն ետք, ղեկավարներէն եղաւ Կիպրոսի ՌԱԿի շրջանակին:
Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը հիմնուած էր 1926-ին եւ արդէն դարձած էր գաղթահայութեան սիրոյն ու գուրգուրանքին արժանի՝ հայ հոգիին ու մտքին վառարանը: Ա. Պէրպէրեան Հաստատութենէն ներս պաշտօնավարող իւրաքանչիւր կրթական մշակին հետ շփուելու առիթ ունեցած էր: Յետ Եղեռնի այդ մշակներն էին Գրիգոր Կիրակոսեան, Յակոբ Օշական, Վահան Թէքէեան, Պօղոս Գէորգեան, Յակոբ Դաւիթեան, Վահան Պէտէլեան, դոկտ. Յակոբ Թոփճեան, Վահէ-Վահեան, Գէորգ Պօղոսեան, դոկտ. Մելքոն Քրիշչեան, Օննիկ Մահտեսեան, Յովհաննէս Շէօհմէլեան, Յակոբ Աճէմեան, Դանիէլ Ոսկեան, Բիւզանդ Եղիայեան, Ներսէս Թամամեան, Հռիփ Գարագաշեան, Խաչէր Գալուստեան, դոկտ. Յարութիւն Էսէկիւլեան, Ագապի Նասիպեան... մինչեւ Ասատուր Պետեան: Մեծ մասը այս մեծ դէմքերուն ռամկավար ազատականներ էին: Ու այս ինքնին ազգային հասարակական դպրոց մըն էր: Արշաւիր Պէրպէրեան եղաւ մնայուն բարեկամը այս հոյլ մը մտաւորականներուն, որոնք տուին բացի կրթականէն, նաեւ ազգային առաջնորդութիւն:
Ան կը մահանար 15 Սեպտեմբեր 1968-ի կէս գիշերին: 53 տարեկանին իր կեանքի թելը կը կտրուէր այս աշխարհէն: Արշաւիր Պէրպէրեանի յուղարկաւորութիւնը զգեցաւ համազգային բնոյթ: Հայ եւ յոյն հսկայ բազմութիւն մը հետեւեցաւ հանգուցեալի դագաղին: Բազմաթիւ աշակերտներ Մելգոնեան Կրթական Հաստատութենէն, թէ քաղաքի վարժարանէն եկած էին անոր թաղումին: Մեծ թիւով ծաղկեպսակներ ղրկուած էին ծանօթ քաղաքական դէմքերէ եւ հաստատութիւններէ: Թաղմանական կարգին նախագահեց Արսէն ծ. Վրդ. Աւետիքեան: Դամբանականը խօսեցաւ Կիպրոսի մեր ղեկավար ընկերներէն Սմբատ Տէրունեան (Տէվլեթեան), որ եղած էր գաղափարի ընկերն ու գործակիցը ողբացեալին: Խօսք առաւ նաեւ կիպրական Հեռահաղորդակցութեան Ընկերակցութեան կողմէ Լաքիս Լէոնտիատիս, որ դրուատեց բարեմասնութիւնները ողբացեալին եւ անոր տուած ներդրումը կիպրական հայրենիքին: Շեշտեց անոր մասնակցութիւնն ու նախաձեռնութիւնը աշխատաւորական շարժումին բերած նպաստին եւ ողբաց իբրեւ ընկեր ու ընտանիքի հայր անոր վաղաժամ կորուստին առթած մեծ ցաւը:

1974-ի թրքական ներխուժումով հայաբնակ Նիկոսիոյ թաղամասին վրայ Պէրպէրեաններու տունը եւս կը գրաւուի եւ մեր ընկերոջ արխիւն ու գիրքերը կը մնան անպատսպար ու թուրքերու ճակատագրին յանձնուած...: Այս գրութեան հետ, իր լուսանկարին ձեռքբերումն անգամ կ'ըլլայ դժուար: Արշաւիր Պէրպէրեան կիպրահայ գաղութին ամէնէն գործունեայ ղեկավարներէն էր եղած: Իր բոլոր գործերուն մէջ ան կը ցուցաբերէր հաղորդականութիւն, կարգապահութիւն, անկեղծութիւն ու բծախնդրութիւն: Հաւատացողն էր նախաձեռնութիւններու: Ազգապահպանման մեր մեծ պայքարի տոկուն մարտիկներէն էր, ջերմ հայրենասիրութեամբ տոգորուած գործիչ մը, որ անընկճելի լաւատեսութեամբ կը դիտէր Մայր Հայրենիքի յարաճուն վերելքը եւ կ'ողջունէր մեր ժողովուրդի պայծառ ապագան:
Կիրքո՛վ կը սիրէր հայ ժողովուրդը եւ օրինակելի նուիրումով կը հետապնդէր անոր շահերը: Անիկա մի՛շտ պատնէշի վրայ էր՝ ըլլա՛յ հետապնդելու հայոց սրբազան Դատը, թէ պաշտպանելու Հայկական Հանրապետութիւնը կամ Հայաստանեայց Եկեղեցւոյ միասնականութիւնն ու Ս. Էջմիածինը:
Վեհանձն նկարագիրով ծառայասէր մը, որ կը վայելէր սէրն ու համակրութիւնը ո՛չ միայն իր կուսակցական ընկերներուն, այլ նաեւ բոլոր ազգային շրջանակներուն եւ տեղացիներուն: Բոլոր անոնք որոնք ճանչցած են Արշաւիրը, զինք դասած են որպէս ճշմարիտ հայրենասէրը, ծառայող մարդը եւ անբասիր ազգայինը. Վերջապէս՝
Ընտրեալ Մարդը:
Յակոբ Վարդիվառեան
Նիւ Եորք
(յապաւումներով)

Խմբագրական

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 20-ԱՄԵԱԿԸ՝ ԿՈՉ ՍԹԱՓՈՒՄԻ

Հայաստանի անկախութեան 20-ամեակի փառահեղ տօնակատարութիւնները շուտով կ'անցնին պատմութեան: Յոբելենական հանդիսութիւններ, ռազմական շքերթ, համաժողովներ, տօնական համերգներ եւ այլ ձեռնարկներ խանդավառեցին ողջ հայութիւնը՝ Հայաստան-Արցախ-Սփիւռք..., պահ մը մոռացութեան տալով այն ճգնաժամային, մռայլ իրավիճակը, որ այսօր կ'ի՛շխէ մեր Հանրապետութենէն ներս...: Բայց կարելի է՞ ջայլամի քաղաքականութեամբ աչք փակել իրականութեան, կամ գիտակից թէ անգիտակից ինքնախաբէութեամբ անձնատուր ըլլալ

ցանկատեսութեանց հրապոյրին…:
Խանդավառութիւն առթող պահերէն, ցուցական եւ ցուցադրական երեւոյթներէն ու աղմկարար իրարանցումներէն ետք, պահն է զգաստութեան, սթափ միտքով ու յստակատես հայեացքով դիտելու հայրենական կարծր իրականութիւնը, եւ որքան ալ դառն, բարձրաձայնելու անողոք ճշմարտութիւնը, հաւատալով որ մի՛շտ ալ ճշմարտութիւնն է որ կրնայ ազատագրել մեզ մեր սխալներէն, ճանապարհ հարթել անոնց սրբագրումին, ազդակ դառնալ յառաջդիմութեան ու ազգային-պետական-քաղաքացիական իրա՛ւ ու լիարժէք կեանքի կայացման ու զարգացման:
Այսօր, անկախութենէն ուղիղ 20 տարի ետք, կրնա՞նք ըսել որ մեր երկրին մէջ կայ դեմոկրատիա, ազատ ու արդար հասարակարգ, անկախութիւն եւ նման արժէքներ, թէ՞՝ այդ եզրերը պարպուած են իրենց իրա՛ւ բովանդակութենէն եւ դարձած՝ լոկ զգացական հայրենասիրութիւնը շոյող, լոզունգային արժէք միայն ունեցող բառ-հասկացութիւններ…:
Միամտութիւն պիտի ըլլար որոշապէս կարծել, որ մեր երկիրը ունի դեմոկրատիա եւ ազատ ու արդար հասարակարգ, երբ այնտեղ կ'իշխէ օլիկարխիկ մենաշնորհեալներու կամ քլաններու փոքրամասնութիւն մը, որ իր բռնապետութիւնը հաստատած է ժողովուրդի բացարձակ մեծամասնութեան վրայ, յափշտակած է երկրին ողջ հարստութիւնն ու կառոյցները՝ անկախացման առաջին օրերէն իսկ, ՀՀ իշխանութեանց նախաձեռնած վայրի սեփականաշնորհման միջոցով եւ անոնց որդեգրած վայրի դրամատիրական համակարգին հետեւանքով:
Զարմանալի չէ, որ այսօր Հանրապետութեան հանրային ամբողջ ունեցուածքը կեդրոնացած է փոքր թիւ մը կազմող ընտանիքներու ձեռքը, որոնց ապրած շռայլ ու շուայտ կեանքը արդար ընդվզում միայն կրնայ յառաջացնել մնացեալ ընչազուրկ բացարձակ մեծամասնութեան մօտ…:
Այսպէս է որ 1988-ին ազգային ինքնագիտակցութեան մեծ զարթօնք ու վերածնունդ ապրած մեր ժողովուրդը տակաւ կը հիասթափուէր ու կը բարոյալքուէր, մատնուելով գործազրկութեան ու անարտադրողականութեան, չքաւորութեան ու թշուառութեան, հուսկ բռնելով՝ հետզհետէ ահագնացող, հայրենալքումի ու արտագաղթի կորստաբեր ճամբան:
Իրերը իրենց անունով կոչելով, ժողովրդանուէր դեմոկրատիայի փոխան, սակաւապետութիւն մը կը ձեւաւորուէր, որուն իշխանական վերնախաւը շարունակաբար ինքզինք կը վերարտադրէ, բռնազաւթելով իր իշխանական մենաշնորհեալ դիրքերը՝ կեղծուած ընտրութիւններով թէ այլ հնարքներով, արհամարհելով դեմոկրատական ամենատարրական սկզբունքները, խտրութիւն չդնելով միջոցներու մէջ եւ դիմելով այնպիսի բռնարարքներու՝ ինչպիսիք են Ապրիլ 12-ի, Մարտ 1-ի բռնութիւնները, եւ՝ նոյնիսկ ոճիրներու, որոնց գագաթնակէտը պիտի հանդիսանար Հոկտեմբեր 27-ի եղեռնագործութիւնը Ազգային Ժողովի դահլիճին մէջ…: Յանցագործութիւններ՝ որոնք միշտ ալ մնացին ու ցարդ կը մնան չբացայայտուած ու անպատիժ:
Առանձնապէս նշելու ենք նաեւ փտածութեան կամ կաշառակերութեան (կոռուպցիա) ախտը, որ ներխուժած է քիչ մը ամէն տեղ՝ առողջապահական, կրթական, ընկերային-տնտեսական համակարգերէն ներս եւ իր աւերը կը գործէ շարունակաբար…: Ակնյայտ է, հետեւաբար, որ մեր Հանրապետութենէն ներս՝

օրէնքը կը մնայ սոսկ թուղթի վրայ, իր տեղը զիջելով վայրի անտառի օրէնքին, որ իրաւունքը կու տայ զօրաւորին եւ կ'իրաւազրկէ տկարը ցայտուն անարդարութիւններով…: Աւելորդ է ըսել, որ նման կացութիւն մը յղի է ամէնէն աղէտալի վտանգներով: Մեծ փիլիսոփայ Արիստոտէլ այնքան իմաստալից կերպով պիտի նկատէր հարիւրամեակներ առաջ՝ «Առանց օրէնքի եւ արդարութեան, մարդը յոռեգոյնն է բոլոր կենդանիներէն»:
Զուգահեռաբար, միամտութիւն է կարծել, որ մեր Հանրապետութիւնը ունի անկախութիւն, եթէ «անկախութիւն» բառը ունի բովանդակալից ու լիարժէք իմաստ: Քանզի մեր երկիրը տակաւ կախեալութեան մէջ կը մնայ՝ ԱՄՆ-ի եւ այլ հզօր գերտէրութիւններու, միջազգային ֆինանսական մեծ հաստատութեանց տուած վարկերուն, դրամաշնորհներուն ու ողորմութեանց, ենթակայ՝ անոնց թելադրած քաղաքականութեան ու վարքագիծին…: Ենթակայ՝ ի մասնաւորի ԱՄՆ-ի թելադրած համաշխարհայնացումի խաբեպատիր քաղաքականութեան, ըստ որուն «ազգային գաղափարախօսութիւն»ը կ'որակուէր «կեղծ կատեգորիա» ՀՀ հիմնադիր նախագահին բերնով, եւ ուր տեղ չունին ազգային պատմական անցեալը, պատմական իրաւունքները, Հայ Դատը…: Ահա թէ ինչու ՀՀ իշխանութիւնները երբե՛ք Պահանջատէրը չեղան ու չեն Արեւմտահայաստանի Դատին եւ ստրկամտօրէն ստորագրեցին Հայաստան-Թուրքիա արձանագրութիւնները, ինչպէս նաեւ՝ անձնատուական ու պարտուողական կեցուածք որդեգրեցին Արցախի դարակազմիկ յաղթանակի դիւանագիտական ամրագրման գծով…: Նոյն տրամաբանութեամբ ալ, ազգային մշակոյթի, հայ գիր-գրականութեան, հայոց լեզուի պահպանումն ու զարգացումը, որոնք հիմքերը ըլլալու են ազգային պետականութեան մը, ձգուած են պատահականութեան եւ չունին պետական լուրջ, ծրագրաւորուած հովանաւորութիւն ու հոգածութիւն:
Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 20-ամեայ այս հանգրուանին, Սփիւռքը, որպէս համայն հայութեան անքակտելի մէկ մասը, արդարօրէն կ'ակնկալէ ու պահանջելու պէս կը խնդրէ Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւններէն, որ ա՛լ վերջ գտնեն՝ Հայաստանի օլիկարխացումը, մենաշնորհեալ քլաններու առկայութիւնը, կաշառակերութիւնն ու անպատիժ յանցագործութիւնները, հայկականութեան, ազգային ու մարդկային արժէքներու եւ իրաւունքներու նկատմամբ անփոյթ, անարդար ու արհամարհական վերաբերմունքը, Հայ Դատին եւ Արցախեան հիմնախնդրին նկատմամբ պարտուողական կեցուածքը, հայ աշխատուժի, հայ ուղեղներու, հայ մարդու արտահոսքը, Հայաստանի հայաթափումը:
Պետութիւնը չի կրնար ըլլալ իշխանաւոր վերնախաւի մը սեփականութիւնն ու մենաշնորհը, անոր կամայականութիւններուն, քմահաճոյքին ու անձնական շահամոլութեանց, նուրբ թէ բացայայտ կողոպուտին առարկան: Նման պետութիւն մը, ուշ կամ կանուխ, դատապարտուած է կորստեան, ինչպէս ցոյց կու տայ համաշխարհային պատմութեան փորձը:
ՊԵՏՈՒԹԻՆԸ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ Է, գերագոյն մարմնաւորումը անոր ազգային ու մարդկային իղձերուն եւ իտէալներուն, յոյսերուն ու յոյզերուն, իրաւունքներուն եւ պարտաւորութիւններուն: Երաշխիքը՝ անոր քաղաքացիներուն ազատ, արդար, օրինաւոր եւ արժանապատիւ կեանքին:

Կ'ունենա՞նք նման պետութիւն մը՝ որ ՅԱՆՁՆԱՌՈՒ ՏԷՐԸ ըլլայ մեր Մայր Հողին, անոր ժողովուրդի անհատական ու հաւաքական արժանապատիւ ճակատագրին: Ահա գերագոյն մարտահրաւէրը այսօր՝ Հայաստանի Հանրապետութեան 20-ամեակի շրջադարձային հանգրուանին:
Երան Գույումճեան

Հարցազրոյց

Հարցազրոյց ԱՍԱԼԱ-ի նախկին անդամ, «Սարդարապատ» շարժման նախաձեռնող խմբի անդամ Ալեք Ենիգոմշեանի հետ

-Այսօր ԼՂՀ անկախութեան օրն է: Ի՞նչ ձեռքբերումներ ունեցանք այս 20 տարիների ընթացքում:

-Նախ՝ շնորհաւորում ենք Արցախի մեր հայրենակիցներին, բայց ասեմ, որ Արցախը՝ որպէս անկախ պետութիւն, հայ ժողովրդի համար ինչ-որ իմաստով անհեթեթ է, որովհետև Արցախը Հայաստանի մասն է կազմում: Սա մեզ համար անբեկանելի սկզբունք է, բայց եթէ դիւանագիտական պատճառներով Արցախի անկախութիւնը հռչակուել է, ապա դա ևս չպէտք է Արցախի և Հայաստանի այսօրուայ ղեկավարներին, ամբողջ հայ ժողովրդին մոռացնել տայ, որ մեր 1988-ի շարժումն սկսուել է միացում սկզբունքով: Այսօր ևս փաստացի միացում գոյութիւն ունի, և հիմնական խնդիրն այդ փաստն իրաւական կարգավիճակի հասցնելն է: Այս 20 տարիների ընթացքում ամենամեծ ձեռքբերումը եղել է նախկին ԼՂԻՄ-ի տարածքի ազատագրումն ատրպէյճանական ուժերից և յատկապէս նախապէս հայաթափ եղած և Ատրպէյճանի կողմից գրաւուած պատմական հայկական հողերի ազատագրումը, այսինքն՝ այն, ինչ մենք կոչում ենք ազատագրուած տարածքներ: Սա մեր ամենամեծ յաղթանակն է, որ Հայաստանն իրականացրել է ոչ միայն վերջին 20 տարիների, այլ երկարատև դարերի ընթացքում:

-Իսկ ի՞նչ բացթողումներ ունենք:

-Բացթողումները շատ են: Առաջինն այն է, որ պատերազմի դաշտում ձեռք բերուած յաղթանակը չդարձաւ խաղաղ ժամանակների յաղթանակ այն առումով, որ առաջին հերթին այդ ազատագրուած հողերը չիւրացուեցին հայ ժողովրդի կողմից իշխանութիւնների մեղքով: Հայաստանի իշխանութիւնները և, ինչու ոչ, նրանց լծորդ Արցախի իշխանութիւնները յատուկ ռազմավարութիւն չմշակեցին այդ շրջանները բնակեցնելու համար. հակառակը՝ նրանք բազմաթիւ անգամներ ինքնագոհ կերպով միջազգային հանրութեանը, որպէս դրական իրագործում, հաւաստում էին, որ, ահաւասիկ, տեսէ՛ք, մենք այդ շրջանները չենք բնակեցրել: Սա ամենամեծ բացթողումն է եղել:

-Ինչպէ՞ս էք գնահատում Հայաստանի և Արցախի իշխանութիւնների վարածքաղաքականութիւնը:

-Ընդհանրապէս այն քաղաքականութիւնը, այն համակարգը, որ տիրում էր Հայաստանի Հանրապետութիւնում և Արցախում, առաջ է բերել ժողովրդի մէջ հիասթափութեան և յուսալքման այնպիսի իրավիճակ, որ ամենամեծ խնդիրը Հայաստանի համար դարձել է արտագաղթը, և դա մենք տեսնում ենք ոչ միայն ՀՀ-ում, այլ նաև Արցախում, և դա ամենամեծ բացթողումն ու ամենամեծ սպառնալիքն է, որ կախուած է մեր ժողովրդի և մեր պետականութեան գլխին:

-Իսկ ի՞նչ սպառնալիքներ կան Հայաստանի և Արցախի առջև:

-Արտաքին սպառնալիքներին, ինչպէս անցեալում, այնպէս էլ հիմա, կը դիմակայի հայ ժողովուրդը, կը դիմագրաւի իր ամբողջ ուժով, չնայած բարոյահոգեբանական այն վիճակին, որը տիրում է ժողովրդի մէջ, և, ցաւօք, նաև զինուած ուժերի շարքերում, որոնց ականատեսն ենք լինում համարեա ամէն շաբաթ: Չնայած դրան՝ ես վստահ եմ, որ ժողովուրդն իր զինեալ ուժերով և քաղաքացիական հասարակութեամբ կը կարողանայ դիմագրաւել ցանկացած սպառնալիք, որը տուեալ պահին Ատրպէյճանից կարող է գալ:

-Իսկ պատերազմի հաւանականութիւն կայ՞:

-Պատերազմի հաւանականութիւնը կախուած է մեր դիմադրողական վիճակից: Բոլորս էլ գիտենք, որ Ատրպէյճանն այս վերջին տարիների ընթացքում անընդհատ կրկնապատկում է իր ռազմական պիւտճէն և սպառազինութիւնը, և այն ժամանակ, երբ Ատրպէյճանը վստահ լինի, որ կը կարողանայ թէկուզ մի քանի օրով ուժեղ հարուածներ հասցնել Հայաստանին և հայկական զինուժին, կը գնայ այդ քայլին: Ամբողջ խնդիրն այն է, որ, ներքին վիճակից ելնելով, դժուար թէ Ադրբեջանը հասնի այդ աստիճանի, որ ինքն իրեն զգա այնքան ինքնավստահ, որ նման քայլի դիմի, սակայն դա մեզ բացարձակապէս չպէտք է մոլի անտարբերութեան և հսկողութեան կորստի: Սակայն մեր գլխաւոր սպառնալիքը, ցաւօք, սրտի ներսից է գալիս:

-Ի դէպ, ներքաղաքական ի՞նչ զարգացումներ էք կանխատեսում:

Առջևումնախընտրական տարիէ:

-Այնքան ժամանակ, որ մենք ունենք նման երկիր՝ բոլոր բնագաւառներում թուլացած և՛ նիւթական, և՛ բարոյահոգեբանական իմաստով, անկախութեան (խօսքը ոչ թէ Արցախի անկախութեան, այլ ընդհանրապես անկախութեան մասին է) ատրիբուտների հետզհետէ կորցնելու պայմաններում հիմնական սպառնալիքն այս իրավիճակի շարունակութիւնն է դառնալու: Ինչքան այս իրավիճակը շարունակուի Հայաստանում, այնքան արտաքին թշնամիների սպառնալիքները դիմադրելու յաջողութեան հաւանականութիւնը կը պակասի: Ես չեմ ասում, թէ մենք հասել ենք այդ փուլին, բայց ինչքան ներքին իրավիճակը շարունակուի մնալ, այն, ինչ հիմա է, այնքան մենք դժուարութեան մէջ կը լինենք՝ դիմագրաւելու արտաքին սպառնալիքին, և հակառակը՝ որքան հզօրանանք, որքան շուտ փոխուի համակարգը, այնքան մեզ համար լաւ կը լինի: Ինչ վերաբերում է ընտրութիւններին, անցած առնուազն 15-16 տարուայ փորձը ցոյց է տուել, որ ընտրութիւններից ժողովուրդը ոչ մի յոյս չպէտք է ունենայ, և ես կարծում եմ, որ ժողովրդի մէջ գնալով աւելի մեծ թուով հայրենակիցներ յանգում են այն եզրակացութեան, որ ընդհանրապէս ոչ մի ակնկալիք չի կարելի ունենալ ընտրութիւններից: Նման համակարգի ներսում, նման ռեժիմի իշխանութեան ներքոյ ընտրութիւնները ոչ մի արդար արդիւնք չեն տայ, և այդ պատճառով ես ոչ մի դրական արդիւնք չեմ ակնկալում առաջիկայ ընտրութիւններից՝ ո՛չ խորհրդարանական, ո՛չ էլ նախագահական: Ես վստահ եմ, որ այդ ընտրութիւնների «արդիւնքներն» աւելի են հիասթափեցնելու մեր ժողովրդին, և դա յանգեցնելու է այն գիտակցութեան աւելի ամրապնդման, որ ներկայ համակարգի տապալումը լինելու է միայն ժողովրդի ուժերով, և, ինչպէս ասում են, ուղղակի ժողովրդական միջամտութեամբ, ժողովրդի անմիջական մասնակցութեամբ: Զրոյցը վարեց՝ Հեղինէ Յարութիւնեանը
7or.am 02.09.2011

ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ «ՖԱՍԱՏԱՅԻՆ» Է

Ազգագրագէտ Հրանուշ Խառատեանի կարծիքով՝ երկխօսութեան քօղի տակ պաշտօնական եւ ընդդիմադիր կողմերը այդպէս ալ ներքին համաձայնութեան չեկան ապագայ նախագահական ընտրութիւններու գործընթացի, նախագահի անձի շուրջ:

- Ի սկզբանէ դրակա՞ն, թէ՞ բացասական վերաբերմունք ունէիք երկխօսութեան վերաբերեալ:

- Ես երկխօսութեան վերաբերեալ, կարելի է ասել, որեւէ զգացմունքային վերաբերմունք չունէի: Աւելին, ի սկզբանէ գտնում էի, որ երկխօսութիւնն ինքնին մէկ հարցի է նուիրուած: Այն խնդիրները, որոնք հրապարակուեցին՝ իբրեւ երկխօսութեան թեմա, բնաւ էլ այդպիսիք չէին եւ չդարձան: Եւ ի սկզբանէ, եւ, առաւել եւս, հիմա ես համոզուած եմ, որ երկխօսութեան նպատակը ֆասատային է: Բուն նպատակը յետեւում էր՝ պաշտօնական եւ ընդդիմադիր կողմերը պէտք է ներքին համաձայնութեան գային յառաջիկայ նախագահական ընտրութիւններում ապագայ նախագահի թեկնածուի շուրջ, իսկ մնացեալը երկխօսութեան շուրջ խօսակցութիւններ են:

- Դատելով երկխօսութեան առնչությամբ Ձեր մօտեցումից՝ փաստօրէն կարելի է ենթադրել, որ նախագահի անձի շուրջ համաձայնութեան չե՞ն եկել:

- Այս ամբողջի մէջ ինձ համար տարօրինակ բաներ շատ կան: Հենց ի սկզբանէ ինձ համար տարօրինակ էր, որ ՀԱԿ-ի լիտերը յայտարարում էր, թէ երկխօսութեան բուն փաստը շատ աւելի կարեւոր է: Այսինքն՝ երկրում արդէն բոլոր հարցերը լուծուել են, քանի որ երկխօսութիւն արդէն հնարաւոր է: Թէ ի՞նչ հարցեր էին լուծուել, ինչպէ՞ս էին լուծուել եւ այլն՝ սրանք շատ երկրորդական էին դառնում, բուն երկխօսութեան փաստը՝ առաջնային: Անկեղծ ասած, եթէ այդպիսին էր դիրքորոշումը, հիմա ինձ համար շատ տարօրինակ է ՀԱԿ-ի զգուշաւորութիւնը կամ երկխօսութիւնը դադարեցնելու, ձգձգելու, չգիտեմ՝ հեռանկար ծրագիրը ո՞րն է, բայց այս պահին երկխօսութիւնը կարծես թէ ընդհատելու միտումը: Եթէ երկխօսութեան բուն փաստն այդքան կարեւոր էր, դրան արդէն հասել էին, ինչո՞ւ պիտի հիմա դադարեցնէին, եւ այդ «բուն փաստը», «կարեւորագոյն խնդիրը» դուրս գար ընդհանրապէս: Երկխօսութեանը ներկայացուեցին ինչ-որ փաթեթներ, որոնցում իշխանութիւնն աւելի շատ պատասխանում է ՀԱԿ-ի առաջադրած խնդիրներին, ոչ թէ իր ծրագիրն է առաջարկում, ՀԱԿ-ը՝ ինքը, որոշ հարցերում՝ վերլուծութիւններ, որոշներում յայտարարութիւններ արեց, բայց այս բոլորը հիմա երկրորդական են դարձել, երկխօսութեան բուն փաստն անգամ երկրորդական է դարձել՝ ես այս ամէնից ուղղակի ենթադրում եմ, որ նախագահի ընտրութեան պրոցէսի, գուցէ նաեւ անձի ընտրութեան շուրջ համաձայնութիւն չի կայացուել:

- Այս ընթացքն ի՞նչ ցոյց տուեց՝ իշխանութի՞ւնն էր աւելի անկեղծ իր պահուածքով եւ նկրտումներով, թե՞ ՀԱԿ-ը:

- Ես կարծում եմ՝ ոչ ընդդիմութիւնը, ոչ էլ իշխանութիւնը:

- Ի՞նչ էք կարծում, աշնանը քաղաքական զարգացումներն ի՞նչ ընթացք կը ստանան:

- Դէ, հիմա խօսում են հանրահաւաքային ձեւին վերադառնալու մասին: Յետոյ, կարծում եմ, նորից կը սկսեն աւազակապետական եւ մոնղոլ-թաթարական տերմինալոկիայի ակտիւացումը:
Այժմ ակնյայտ է, որ Ազգային ժողովի եւ առաւել եւս՝ նախագահական արտահերթ ընտրութիւնների մասին խօսակցութիւնն արդէն հրապարակից դուրս է գալիս: Բայց ընտրութիւններից մի քիչ առաջ, այնուհանդերձ, ներքին պայմանաւորուածութիւններ կը լինեն, որից յետոյ աւազակապետական եւ մոնղոլ-թաթարական տերմինալոկիան կը դադարի ակտիւ լինելուց, եւ կը լինեն յանուն երկրի՝ կառուցողական ծրագրերի շուրջ բանակցութիւններ, հաւանական են խօսակցութիւնները, որ ՀԱԿ-ը Ազգային ժողովում կ'ունենայ ընդդիմադիր թեւ ու այդպիսով կը հաւասարակշռի:

- Իսկ այս ամէնում ո՞րն է հասարակութեան տեղը, դերը, շահը:

- Ես չեմ տեսնում: Կարծում եմ, որ հասարակութիւնը շատ յստակ հետեւութիւն արեց. այսօր արտագաղթի տեմպերն են էլ աւելի ակտիւանում, քաղաքականութեան, դիրքորոշումների շուրջ մարդկանց հետաքրքրութիւններն են նուազում՝ կապի եւ հետեւելու առումով: Մարդիկ պարզապէս հետեւութիւն արեցին, որ այս բոլորը խաղեր են, որտեղ անձային ու անձնային հարցեր են որոշւում, ոչ թէ երկրի եւ բնակչութեան խնդիրների շուրջ լուրջ մտահոգութիւններ, ծրագրեր կան կամ դրանց իրականութիւն դարձնելու ռէալ հեռանկարներ: Մարդիկ ռէալ՝ իւրաքանչիւրն ինքն իր ճակատագիրն է փորձում տնօրինել՝ անկախ երկրի ներքին տնտեսական, քաղաքական, սոցիալական եւ այլ զարգացումներից:

Զրոյցը՝ ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ

«ՏԷՐ, ՕՐՀՆԵԱ ԵՒ ՊԱՀԵԱ ԶԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆՍ ՄԵՐ»
Հարցազրոյց Տէր Ներսէս աւագ Քահանայ Ներսեսեանի հետ

Բրիտանական գրադարանի հայկական բաժանմունքի պատասխանատու Տէր Ներսէս աւագ քահանայ Ներսեսեանի անունը մեր թերթում միայն վերջերս շօշափուեց մի քանի անգամ, ցաւալի առիթով՝ Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանից մի քանի ձեռագրերի ու հինգ մանրանկարների անհետացման առիթով: Գողացողները կամ նրանց մեղսակիցները Լոնտոնում գողօնը իրացնելու ու գնի մասին տեղեկութիւն ստանալու համար նրան էին դիմել: Բարեբախտաբար: Այլապէս կարեւոր այդ մասունքները տեղական աճուրդի տներում իրացուած կը լինէին եւ մենք ոչինչ չէինք իմանայ դրանց ճակատագրի մասին:

Այս հանգամանքներում «Ազգ»-ը պատեհ գտաւ առիթը հարցազրոյց ունենալու ոչ միայն այդ ձեռագրերի շուրջ, այլեւ ներկայացնելու Տէր Հօր վաստակը՝ որպէս ձեռագրագէտ ու մատենագէտ, որպէս բազմաթիւ հրատարակութիւնների ու ցուցահանդէսների կազմակերպիչ, որպէս Բրիտանական թանգարանի բազմամեայ պատասխանատու մասնագէտ:

- Տէր Հայր, դուք ծագումով իրանահայ էք, խնդրում եմ ներկայանաք մեր ընթերցողներին.

- Ծագումով թեհրանահայ եմ: Աւազանի անունով՝ Վրէժ: Զաւակն եմ Դաւիթ եւ Սանդուխտ Ներսեսեանների: Երկուսն էլ վախճանուած: Աւագ եղբայրս եւ փոքրիկ քոյրս ապրում են Թեհրանում: Նախնական կրթութիւնս ստացել եմ Թեհրանում, ապա 9 տարեկան հասակում, բազմաթիւ այլ իրանահայ տղաների եւ աղջիկների նման ուղարկուեցի Կալկաթա՝ ուսումս շարունակելու տեղի Մարդասիրական ճեմարանում: 1965թ. երանաշնորհ Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական այցելութեան եկաւ Հնդկաստան:

Այդ առիթով փափաք յայտնեցի կրթութիւնս շարունակել Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան ճեմարանում: Նոյն թուականին Կալկաթայից մեկնեցի Մայր

աթոռ: Գէորգեան ճեմարանի երեք տարուայ լսարանական բաժինն աւարտելուց յետոյ, այն օրը, երբ պաշտպանեցի իմ աւարտական թէզը, մեկնեցի Լոնտոն՝ Ն.U.O.S.S. Վազգէն վեհափառ հայրապետի հովանաւորութեամբ աստուածաբանական կրթութիւնս շարունակելու House of Sacred Mission Անգլիկան վանքում:

Մէկ տարուայ ուսումնական շրջանն աւարտելուց յետոյ, դիմեցի Լոնտոնի համալսարանի Kings College՝ ուսումնական շրջանս շարունակելու համար: Այն աւարտեցի՝ ստանալով «մագիստրոս աստուածաբանութեան» կոչումը: Յետոյ ընդունուեցի նոյն համալսարանի Modern Greek and Byzantine Studies ֆակուլտետը, որտեղ յայտնի բիւզանդագէտ Prof. D. M. Nicol -ի հսկողութեան տակ պատրաստեցի դոկտորական թէզս՝ «Թոնդրակեան եւ այլ աղանդաւորական շարժումները Հայաստանում», որի յաջող պաշտպանութեան համար ստացայ «դոկտոր փիլիսոփայութեան» կոչումը: Թէզիս արտաքին քննիչներից մէկը՝ հանգուցեալ Prof. D. M. Lang -ն էր: Այս աշխատութիւնը որպէս մենագրութիւն ունեցել է երկու հրատարակութիւն:
1978 թ. Ազգային գրադարան հերթական այցելութեան ընթացքին, գրքափոխանակման բաժնում առիթն ունեցայ ծանօթանալու իմ ապագայ կողակցին՝ օրիորդ Լէյլա Ալթունեանին (Երեւանի պետ. համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզուի եւ գրականութեան բաժնի շրջանաւարտ): Երկու տարի սպասումից յետոյ, ամուսնացանք Լոնտոնի U. Սարգիս եկեղեցում՝ ձեռամբ հանգուցեալ Տ. Ներսէս արք.Պոզապալեանի եւ Գեր. Տիրան արք. Ներսոյեանի ներկայութեամբ: Ունենք երկու տղայ զաւակներ՝ Տիրան եւ Ժիրայր, եւ երկու թոռնիկներ աւագ որդուց՝ Լեւոն եւ Անայիս:

- Ձեր ստեղծագործական եւ մշակութային գործունէութիւնը ծանօթ է գիտական շրջանակներին, հետաքրքրուողները ձեզ գիտեն նաեւ Հայկական համառօտ հանրագիտարանից, սակայն շարքային ընթերցողի եւ յատկապէս իրանահայ ձեր հայրենակիցների համար հետաքրքրական է իմանալ ձեր աշխատանքների մասին:

- Դոկտորական թէզս պաշտպանելուց յետոյ դիմեցի աշխատանքի Բրիտանական թանգարանին (այժմ՝ Բրիտ. գրադարան), ուր պահւում են արժէքաւոր հայկական ձեռագրեր, հնատիպ գրքեր, քարտէզներ: Prof. F. C. Conybeare -ից յետոյ, որը 1913 թ. վարձուեց պատրաստելու համար Հայկական ձեռագրերի ցուցակը, հայկական բաժանմունք գոյութիւն չունէր: Ժամանակ առ ժամանակ որոշ հայ գիտաշխատողներ աշխատել էին հայկական հաւաքածոների վրայ, բայց ոչ կանոնաւոր կերպով: Ես առաջինը եղայ, որ մշտական աշխատանքի կոչուեցի այս հաստատութեան մէջ որպէս մասնագէտ Հայկական բաժանմունքի: Կարճ ժամանակաշրջանում պատրաստեցի եւ հրատարակեցի գրադարանի «Հնատիպ գրքերի ցուցակը, 1512-1850թթ.»՝ ներառնելով 0xford քաղաքի Bodleian Library-ի հաւաքածոն եւս:

Սա առաջին հրատարատութիւնն էր անգլերէն լեզուով՝ նուիրուած հայ տպագրութեան պատմութեան: Այնուհետեւ, ամբողջացնելու համար 1913 թ. տպագրուած Հայկական ձեռագրերի ցուցակը, պատրաստեցի յաւելեալ մի մենագրութիւն՝ նուիրուած սոյն ձեռագրերի մանրանկարչական արուեստին, վերնագրուած՝ «Armenian Illuminated Gospel Books»: Երկու հրատարակութիւնների հրապարակման առիթով պատրաստեցի իմ անդրանիկ ցուցահանդէսը՝ նուիրուած հայ տպագրութեան պատմութեան եւ հայ ձեռագրերի մանրանկարչութեան: Երկրորդ ցուցահանդէսիս բացմանը ներկայ էր Կ. Պոլսի հանգուցեալ Պատրիարք ամենապատիւ Շնորհք Արք. Գալուստեանը:
Այս յաջողութիւնից յետոյ Հայկական բաժանմունքի գոյութիւնն ապահովելու համար, որոշեցի իմ վրայ առնել աւանդապահութիւնը ողջ Արեւելեան քրիստոնեայ քոյր եկեղեցիների մշակութային ժառանգութեան պահակութիւնը Բրիտանական գրադարանում: Նման բաժանմունք գոյութիւն չունէր մինչ այդ: Բաժանմունքները կարգաւորուած էին համաձայն լեզուական խմբաւորումների (հայկականը՝ պարսկականի հետ, ղպտերէնը՝ յունականի, ասորերէնը եւ եթովպերէնը՝ եբրայականի եւ այլն):

Մի ամբողջ տարի գրադարանի ծախսով յաճախեցի Օքսֆորտի համալսարան՝ մասնակցելու ասորերէնի դասընթացներին՝ Prof. S. Brock-ի մօտ եւ միաժամանակ մասնակցում Prof. C. H. Dowsett-ի գրաբարի դասընթացներին, որն, ինչպէս գիտէք, առաջին անգլիացի հայագէտն էր, որ նշանակուեց Օքսֆորտ համալսարանի Գալուստ Կիւլպէնքեան նորաբաց հայագիտութեան ամպիոնի փրոֆեսոր: Գրադարանում The Christian Orient նոր բաժանմունքին նուիրուած առաջին ցուցահանդէսը բացուեց 1978 թուականին: Այս ցուցահանդէսի համար մեզ յաջողուեց Ամենայն հայոց կաթողիկոսի միջնորդութեամբ Անգլիա բերել մի հայկական խաչքար՝ Սեւանի շրջանի Նորադուզի գերեզմանոցից՝ թուագրուած 1225 թ.: Ցուցահանդէսի աւարտից յետոյ մեր առաջարկով Կաթողիկոսը խաչքարը նուիրաբերեց Բրիտանական թանգարանին, ուր այն մշտապէս ցուցադրւում է Medieval and Later Antiquities բաժանմունքում:
1983 թուականին ձեռնադրուեցի քահանայ Երեւանի Սուրբ Սարգիս եկեղեցում՝ հանգուցեալ Գերաշնորհ Ներսէս Արք. Պոզապալեանի ձեռամբ, որը նաեւ իմ տեսուչն էր Հոգեւոր ճեմարանի տարիներիս եւ ես՝ իրեն սպասարկող սարկաւագ, Լոնտոնում իր 13-ամեայ առաջնորդութեան ընթացքին:

Ձեռնադրութեանս առիթով եռամեծար հայրապետի ձեռամբ եւ կոնդակով ստացայ շնորհը՝ «վարդապետական լանջախաչ» կրելու՝ «նկատի առնելով իմ հոգեւոր գործունէութիւնն ու համալսարանական գիտական բարձր կոչումը», ինչպէս գրում է Վազգէն Վեհափառն իր շնորհաւորական կոնդակում: Իսկ 1991թ. Վեհափառ հայրապետը ջերմապէս գնահատելով երկար տարիների իմ եկեղեցանուէր հոգեշէն վաստակը եւ ընդառաջելով Անգլիոյ Հայոց Հայրապետական պատուիրակ Տ. Եղիշէ արք. Կիզիրեանի միջնորդութեանը, շնորհեց «աւագ քահանայութեան» աստիճան:
2005թ. Յուլիսին ՀՀ ԳԱ-ն, ակադեմիայի պրեզիդենտ ակադեմիկոս Ֆադեյ Սարգսեանի նախագահութեամբ իմ հայագիտական եւ արուեստի պատմութեան աշխատանքների համար շնորհուեց Ակադեմիայի պատուաւոր դոկտորի կոչում:

- Ի՞նչ է լինելու Բրիտանական գրադարանում ձեր զբաղեցրած այս կարեւոր պաշտօնի ճակատագիրը ձեր հանգստեան կոչուելու պարագային:

- Այս տարի իր աւարտին է հասնում իմ աշխատանքային շրջանը գրադարանում: Տնտեսական ճգնաժամի պատճառով եւ կրճատումների հետեւանքով 36 երկարատեւ տարիներից յետոյ, ողջ Քրիստոնեայ Արեւելք բաժինը դադարելու է որպէս առանձին մասնաճիւղ լինելուց՝ Asian and African Studies բաժանմունքում: Այս ընթացքին հայկական ձեռագրերի հաւաքածոն համալրուել է 124 շատ բացառիկ ձեռագրերով, իսկ տպագրուած գրքերը հարստացել են մի քանի յայտնի անձնական գրադարանների գնումով:

Թուարկեմ միայն մի քանիսը՝ Փրոֆ.. Ֆրեդրիկ Ֆեյտիի, Ասպետ Տօնապետեանի, Եդուարդ Կիլպէնքեանի, Արշակ Սաֆրաստեանի, Արտաշէս Տէր Խաչատրեանի: Գրադարանը ընդմիշտ թողնելուցս առաջ, վերջին անգամ կը ստուգեմ հրատարակութեան համար պատրաստած իմ Catalogue of Armenian manuscripts in the British Library acquired after 1913 and 13 other collections in the libraries and institutions of the United Kingdom: Այս ձեռացուցակը կը պարունակի նկարագրութիւնները այն ձեռագրերի, որոնք աւելացուել են Բրիտանական Գրադարանի հաւաքածոյին 1913 թուականից ի վեր, ինչպէս նաեւ 13 այլ հաւաքածոների՝ անգլիայի զանազան գրադարաններից եւ թանգարաններից: Բազմաթիւ ցուցահանդէսների շարքին արժէ ընթերցողների ուշադրութեանը ներկայացնել Բրիտանական գրադարանի կազմակերպած «Գանձեր Տապանից» ցուցահանդէսը՝ նուիրուած հայոց քրիստոնէութեան 1700-ամեակին:

- Ձեր շնորհիւ եւ «Ազգ»-ի հրապարակումով հայ հանրութիւնը տեղեկացաւ Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ վանքի թանգարանի ձեռագրերից պոկուած մանրանկարների եւ սրբապատկերների Լոնտոնում յայտնուելու մասին, որը լայն արձագանգ ունեցաւ թէ՛ Հայաստանում եւ թէ՛ Սփիւռքում: Ըստ երեւոյթին յանցագործները դիմելով ձեզ՝ կատարել են ամենաճիշդ եւ միաժամանակ ամենասխալ ընտրութիւնը: Ի՞նչ կ'ասէք այդ մասին:

- Ամենափրկիչ Վանքի ձեռագրերի պատկերների վանտալիզմը մեծագոյն հարուածն է հայ ժողովրդի կարողութեանը՝ տէր մնալու իր մշակութային ժառանգութեան. «օրինեա եւ պահեա զժառանգութիւնս մեր», աղերսում է պատարագիչը ամէն կիրակի: Այս պարագային յանցանքը կատարողները ոչ միայն ընտրել էին ամենագրաւիչ ձեռագրերը, այլ նաեւ սխալ անձը՝ խորհուրդ հարցնելու համար:

Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի շուրջ 600 ձեռագրերից նրանք ընտրել էին ամենարժէքաւոր ձեռագրերը եւ սա ինձ ենթադրել է տալիս, որ այս գողութիւնը կատարուել է ըստ պատուէրի: Այստեղ իմ մտահոգութիւնները ի մի բերելու համար

պիտի կրկնեմ մի հայ գրչի խօսքերը. «Տէր, վայ, վայ, վայ, վայ ինձ, եւ անզօր, եւ անտէր ազգիս մերում, զի չունի մի գլուխ, ունիմք քահանայութիւնն, բայց տկար է եւ անզօր» (Մատենադարան, Ձեռ. 151):

- Ինչպիսի՞ն էր Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ իրանահայ թեմերի հակազդեցութիւնը, երբ դուք նրանց յայտնեցիք պատառիկների մասին:

- Ես, ձեռագրերից պատռուած, հանուած մանրանկարների թիւ-թուականը, թերթահամարը հաստատելուց յետոյ, լուրն անմիջապէս ուղարկեցի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, Թեհրանի գերաշնորհ առաջնորդին եւ Նոր Ջուղայի Թեմական խորհրդին: Իմ ցանկութիւնն էր ճշդել եւ իմանալ ստոյգութիւնն իմ կասկածի, եւ ստոյգ ու վաւերական լինելու պարագային, լուր տալ միջազգային Interpol ընկերութեանը, որն անմիջապէս գրանցում է գողացուած արուեստի տուեալները եւ զգուշացնում գնողներին:

Բաւական ժամանակ լռութիւնից յետոյ մի անգամ եւս դիմեցի վերոյիշեալներին՝ մէջբերելով աւետարանի խօսքը. «չէ փոյթ»... Պատասխան ստացայ դիւանապետից՝ ինձ յայտնելով, որ իրենք տեղեակ են կատարուածի մասին եւ ամէն քայլ առել են կասեցնելու դրանց վաճառքը: Իսկ Նոր Ջուղայի առաջնորդն իր հակիրճ պատասխան գրութեան մէջ մէջբերում է անում հայկական մի առածի, որն է՝ «Լաւ է խաղողը ուտել, քան այգեպանին ծեծել»: Ցաւօք, ես այս առածի իմաստը չեմ հասկացել այս պարագային: Ես ոչ խաղող ուտելու ծարաւ ունեմ եւ ոչ էլ միտումը այգեպանին ծեծելու: Նաեւ ինձ վստահեցնում էր, որ յանցագործներին շուտով բռնելու են եւ պատառիկները վերադարձուելու են վանք:

- Նման դէպքեր նախընթաց ունեցել են, ո՞րն է ձեր կարծիքով պատառիկները վերադարձնելու ամենայուսալի ճանապարհը:

- Պատառիկների վերադարձի ամենայուսալի պահը այն կը լինի, երբ գողերը լսելով իրենց խղճի ձայնին եւ մեր գրիչների պատուէրին. «Որ ոք յանդգնեսցի գրաւի առնելոյ կամ ծախելոյ ի յազգականաց եւ յամենայն արեամբ մերձաւորաց, եթէ կարգաւոր իցէ, մասն ընդ Յուդայի եւ ընդ Արիոսի առցէ, եւս եթէ յաշխարհական՝ ընդ խաչահանողացն համարեսցի եւս ինքն նզովեալ եղիցի» (Մատենադարան, Ձեռ. 198), դրանք կը վերադարձնեն հայ ժողովրդի պահած-պահպանած դարաւոր հաստատութիւններից մէկին՝ Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքին: Վանքի անուան «փրկիչ» բնութագրումը պէտք է լինի ամէն հայ անհատի պարտականութիւնը:

- Սպահանի Առաջնորդարանը յայտարարել է, որ պատառիկները աճուրդի են

հանուել Անգլիայում, կարելի՞ է իմանալ, թե ո՞ր ընկերութիւնն է դրանք աճուրդի հանել եւ նրան պատասխանատուութեան հրաւիրել:

- Ձեռագրերի պատառիկները աճուրդի չեն հանուել: Իւրաքանչիւր պատուաւոր հաստատութիւն, որեւէ արուեստի առարկայ վաճառելու կամ գնելու պարագային պէտք է անցկացնի այսպէս կոչուած՝ «Diligence Test»-ի բոլոր չափանիշները: Պատառիկների պարագային դա անհնարին է, բացի այն պարագային, որ դրանք վաճառուեն անհատների՝ «By Private Treaty» (համաձայնագիր վաճառողի եւ գնողի միջեւ):

- Ունէ՞ք որեւէ պատգամ ընթերցողներին:

- Շատ կարեւոր է, որ Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռագրերի մանրանկարների աղճատման հարցը առիթ եւ պատճառ չդարձնել հին քէնութիւններ ու հակամէտ կարծիքներ արծարծելու եւ լուծելու

Յօդուածներ

Բարեկամ մը հեռաձայնեց Փարիզէն...

-Ի՞նչ է բարեկա՛մ, յոգնեցա՞ք գրելէ ու պայքարելէ, Մելգոնեանի փակումը վերջնակա՞ն կը թուի ձեզի: Մի՛ հաւատաք, փակողներն իսկ վստահ չեն այդ մասին, այլապէս, Կիպրոս երթալ գալով պետական ներկայացուցիչներու վրայ նիւթական ու բարոյական ճնշում բանեցնել չեն փորձեր: Բարեկամս, որ Մելգոնեանցի ալ չէ, բայց իբրեւ կրթասէր եւ ազգասէր մտաւորական, մտահոգ է ազգապահպանման պայքարի տկարացումով, անոր մէջ տեսնելով նաեւ

Մելգոնեանի փակուած ըլլալու տխուր իրականութիւնը: Արդարեւ, 2005 Յունիս 5-ին փակուելէն ի վեր, քանի մը հազար հայ պատանիներ հայեցի դաստիարակութիւն ստանալէ զրկուեցան, վարժարանը զրկելով նաեւ հարիւրեակ մը որակաւոր տղոց եւ աղջիկներու իր բերքը տալէն:
Բարեկամս տակաւին խրախուսիչ տեղեկութիւններ տուաւ ֆրանսահայութեան մէջ արթնցող ազգային գիտակցութեան մասին, որուն մէջ տեղ ունին արեւմտահայերէնը եւրոպական համակարգին մէջ իբրեւ ապրող լեզու պահպանելու հարցը եւ Մելգոնեանի վերաբացման համար պայքարը:
Մտահոգ բարեկամիս ըսի, թէ շատ մը կրթական մշակներու եւ մտաւորականներու կարգին ես ալ գրեցի այս սխալ եւ ազգավնաս արարքին մասին, նախ խնդրելով եւ ապա պահանջելով, որ ՀԲԸՄիութեան Կեդր. Վարչութիւնը վերաքննէր իր սխալ որոշումը՝ վերաբանալով Մելգոնեան Կրթական հաստատութիւնը, որ սփիւռքի լաւագոյնն ու մեծագոյնն էր: ՀԲԸՄ-ի ղեկավարութիւնը չլսեց խնդրանքները, բողոքներն ու քննադատութիւնները, որոնք ցոյց կու տային թէ միութիւնը շեղած էր իր առաքելութենէն, որ առաւելաբար կը կայանայ բարեգործութեան եւ ազգային-կրթական մարզին մէջ, նոր դպրոցներ բանալու համար, բայց երբե՛ք փակելու համար: Բազմաթիւ կողմերէ եղած խնդրանքներն ու բողոքները երբ նկատի չառնուեցան, քննադատութեան թիրախ դարձաւ Պերճ Սեդրակեանը, որովհետեւ անոր նախագահութեան օրով առնուեցաւ ապազգային այս որոշումը: Ցաւալի է անշուշտ, բայց զարմանալի չէ անոր այս կեցուածքը, քանի որ, կը կարծէ թէ «Հայ զգալու համար պայման չէ հայերէն խօսիլ»: Պայման չի նկատեր նաեւ որ Մելգոնեանը գոյատեւէ եւ այդ համոզումներով որոշեց փակել զայն, ինչպէս որ փակուեցան նաեւ ուրիշ դպրոցներ:
Կար ժամանակ երբ ՀԲԸՄ Կրթական յանձնախումբեր կային, որոնք նիւթապէս ու բարոյապէս կ'օժանդակէին ոչ միայն սեփական, այլ ընդհանրապէս ազգային վարժարաններուն՝ որոշ գումարներ կամ ուսուցիչներ տրամադրելով անոնց: Անցա՞ն այդ երանելի օրերը:
Հիմա փորձենք քննել, թէ ի՛նչ հակազդեցութիւն եւ հետեւանք ունեցաւ այս տխրահռչակ որոշումը: Ամէն բանէ առաջ ազգապահպանման աշխատանքը մեծ հարուած մը ստացաւ: Բայց ատիկա կարեւոր չէ, երբ նախագահ մը կը խորհի թէ «Հայ ըլլալու համար հայերէն խօսիլը պայման չէ»: Բարեգործականը մեծապէս վարկաբեկուեցաւ եւ մեծ թիւով անդամներ կամ համակիրներ մեկուսացան: Ասոնք ալ կարեւոր չեն Պերճ Սեդրակեան մենատէր ղեկավարին համար, քանի որ ՀԲԸՄ *անդամակցութիւն* արդէն գոյութիւն չունի եւ քանի որ, ընտրութիւններ չեն կատարուիր վարչութիւններ կազմելու համար: Այդ պարտականութիւնը ստանձնած է գործունեայ պր. Նախագահը, որ անսպառ եռանդով միջ-ցամաքային ճամբորդութիւններ կ'ընէ եւ «յարմար» թեկնածուներ գտնելով կը կազմէ տեղական մարմինները, որոնք իրեն միայն ենթակայ են: Ուրեմն կազմուած է բուրուառակիրներու ցանց մը, որուն գործը մասնաւորաբար խնկարկելն է: Այս կացութեան հետ անհաշտ անհատներ կը հեռանան կամաւոր կերպով եւ կամ կը հեռացուին այնպիսիներու կողմէ, որոնց կենսագրութեան մէջ Բարեգործականը գոյութիւն չէ ունեցած...:
Մեր ակնարկը վերստին կեդրոնացնելով Մելգոնեանի փակումին վրայ, կ'արժէ

քննարկել այդ առթիւ երեւան եկած յուսախաբութիւնը, զայրոյթը եւ, ի վերջոյ, ընդդիմութեան կազմակերպումը, որ ՄԿՀ վերաբացումին համար պայքարը կը շարունակէ զանազան ձեւերով եւ աշխարհի զանազան երկիրներուն մէջ: Ցաւալի է սակայն արձանագրել, որ ՄԿՀ փակումը ծափահարողներուն շարքին, մի քանի պատեհապաշտ եւ փառամոլ մելգոնեանցիներ ալ գտնուեցան, որոնք անգիտակից «նախագահ»ի մը խնկարկելով, անոր գլխաւորած «արեգակնային դրութեան» մէջ արբանեակներ ըլլալ ուզեցին, բայց չեմ գիտեր թէ պր. Նախագահը ինչու մերժեց ստրկամիտները եւ պատեհապաշտները վարձատրել: Կ'երեւի ուշացածներուն տեղ չէր մնացած:
Ազգին ու Բարեգործականին համար եւ անձնապէս իրեն համար լաւագոյնը պիտի ըլլար հրաժարիլ այդ ազգավնաս ծրագրէն: Բարեգործականի մեծագումար գանձին վրայ քանի մը հարիւր միլիոն տոլար եւս աւելցնելէն շատ աւելի կարեւոր է Մելգոնեանի վերաբացումը, որուն կրթական գործունէութիւնը անհրաժեշտ է ազգին եւ մասնաւորաբար վարկաբեկումի զառիթափին վրայ եղող ՀԲԸՄ-ի համար:
Հայկ Նագգաշեան
Մոնթրէալ

Բազմազաւակ ընտանիքի երկու երախաները այս տարի դպրոց չեն յաճախեր. Անոնք հագուստ չունին.

Գեղարքունիքի մարզի Ջաղացաձոր գիւղի հանրակրթական դպրոցին մէջ կը սորվին 22 աշակերտ: Անոնցմէ երկուքը, հագուստ չունենալու պատճառով, այս տարի դպրոց չեն յաճախեր: 4-րդ դասարանի աշակերտ Ալեքսը և 9-րդ դասարանի աշակերտուհի Ժենեա Տէր-Գրիգորեանները հարազատ քոյր ու եղբայր են:

Անոնց մայրը՝ Այտան կը, պատմէ որ երախաները նոյնիսկ առօրեայ հագուստ չունին, ուր մնաց դպրոց երթալու հագուստ ունենան: Երախաներու համար վերջին անգամ անցեալ տարի են հագուստ գներ, սակայն հագուստը, անընդհատ հագնուելով և լուացուելով, ամբողջությամբ մաշեր է, ու հիմա երախաները հագնելու բան չունին:
Ժենեան կը փափաքի դպրոց երթալ, սակայն կ'ամչնայ Սեպտեմբեր 1-ին պատռած հագուստով յայտնուիլ համադասարանցիներուն առջեւ:

Մինչ ընտանիքի աւագները կը պատմէին իրենց դժուարութիւններուն մասին, 5-ամեայ Նարեկը թախտին նստած կը խաղար ծակ գուլպաներու արանքէն դուրս եկած ոտքի մատներու հետ: Դուրսը բաւական ցուրտ էր, իսկ տղան ձեռքի ափով կը տաքցնէր գուլպայէն դուրս մնացած մատները:
Տէր-Գրիգորեաններու ընտանիքին մէջ կ' ապրին 8 հոգի՝ ամուսինները, 3 անչափահաս երախաները, չափահաս աղջիկն ու անոր մանկահասակ երախան: Աւագ որդին ալ ադէն 3 ամիս է որ կը ծառայէ բանակին մէջ:
Ըստ Այտա Տէր-Գրիգորեանի պատմածին, արդէն 6 ամիս է, կտրուեր է իրենց եկամուտի միակ աղբիւրը՝ աղքատութեան նպաստը: Սոցիալական բաժինէն ըսեր են, թէ իբր բնակութեան վայրին մէջ գրանցման հետ կապուած խնդիրներ կան, այդ իսկ պատճառով՝ նպաստ չեն տար:
Ջաղացաձորի գիւղապետարանի աշխատակազմի քարտուղար Գագիկ Մարտոյեանը «Հետքի» հետ զրոյցին ըսաւ, որ Տէր-Գրիգորեաններու ընտանիքը մօտ 10 տարի է, ժամանակաւոր կերպով հաշուառուած է գիւղին մէջ, բայց արդէն մէկ ամիս է, ամբողջութեամբ գիւղի գրանցում է ստացեր, ուստի սոցիալական ծառայութիւնները հանգիստ կարող են վերականգնել նպաստը:

Վարդենիսի սոցիալական ծառայութենէն Այտային խոստացեր են, որ յառաջիկայ ամիսներուն կը վերականգնեն նպաստը: Բայց թէ ինչո՞ւ են տեսուչները նոր «յիշեր» ժամանակաւոր գրանցման մասին և կտրել աղքատ ընտանիքի նպաստը, անհասկնալի է, քանի որ առաջ Տէր-Գրիգորեանները նոյն կարգավիճակով մօտ 45.000 դրամ նպաստ են ստացեր, և այս ընթացքին ոչինչ փոխուեր է իրենց ընտանիքին մէջ:

Այդ ժամանակ նպաստի գումարը հազիւ բաւական է եղած, որ երախաները ցամաք հաց ունենան: Այժմ, երբ նպաստ չկայ, օրերով ուտելու հաց չեն ունենար և երախաներուն միայն խաշած գետնախնձորով կը կերակրեն: Այտայի խօսքերով՝ շատ է պատահեր, որ երբ հարևանները տեսեր են թէ երախաները ուտելու բան չունին, իրենք են ալիւր տուեր: Մէկ-մէկ ալ գիւղապետարանն է ալիւր գներ Տէր-Գրիգորեաններու համար:
Ընտանիքը օգնութիւն ստանալու հարցով երբեք չէ դիմած Գեղարքունիքի մարզպետարանին: «Մենք էդման բաներ չէնենք, կը վախենանք էդման բաներուց: Կարող ա մէկին վնաս տան, մի բան էղի, մեզի բան ըսեն»,- կ'ըսէ Այտան: Հարցումին թէ ո՞վ պիտի իրենց բան ըսէ, եթէ մարզպետարան դիմեն՝ ընտանիքի մայրը ուսերը թոթուեց:

Տիկին Այտան կ'ըսէ որ ամուսինը՝ Գրիգոր Տէր-Գրիգորեանը, առողջական լուրջ խնդիրներ ունի: Թոքի վրայ 2 ճաք կայ, լեղապարկը լաւ չի գործեր, իսկ սիրտը ջուրի մէջ է: Քանի որ ծանր ֆիզիքական աշխատանք չի կրնար ընել, հարևան գիւղերէն մօտ 10 գլուխ խոշոր եղջերաւոր անասուն հաւաքեր է ու սարերուն մէջ պահելով զանոնք՝ գումար կ'աշխատի: Մէկ անասունի համար իրեն ամսական կը վճարեն 5000 դրամ:
Գրիգորը անասունները պէտք է պահէ մօտ 3 ամիս: Գումարն արդէն նախապէս վերցուցեր են, երախաներու համար սնունդ են գներ ու հիմա չեն գիտեր, թէ ձմռան ինչպէս են «եղլա գնալու», քանի որ գումարի ակնկալիք այլևս չկայ: Կիսախարխուլ տան բակին մէջ, աթարէ «ամրոց» է կանգնած: Այտան կ'ըսէ որ ձմռան միայն աթար են վառելու, քանի որ վառելափայտ գնելու հնարաւորութիւն չունին: Այդ աթարն ալ սարքեր են ամուսնոյն պահած անասուններու գոմաղբէն: Թէև գոմ ունին, սակայն անասուն չունին: Այտան այս տարի 15 հատ հաւի ճուտ է գներ: Ան կ'ըսէ որ իրենց գիւղին մէջ հնարաւոր է անասուն պահել, ինքն ալ կարող է անասուն պահել ու ստացուած կաթ ու մածունով երախաները կերակրել, միայն թէ կթու կովը բաւականին թանկ է, և հնարաւորութիւն չունին զայն ձեռք բերել: Անցեալ տարի վառարանէն այրեր է ընտանիքի տան տանիքը: Բարեգործական կազմակերպութիւնները գիւղապետարանի հետ միասին վերանորոգեր են տանիքը, փոխեր են տան պատուհանները, սակայն ներսէն դեռ կախուած կը մնան այրած փայտի կտորները: Միջանցքի դեր կատարող սենեակներէն մէկուն առաստաղը ամէն պահ կարող է փուլ գալ, քանի որ այրելէն ետք անիկա կախուեր է:
Գրիշա Բալասանեան (յապաւումներով եւ արեւմտահայերէնի վերածուած)

ՏԵՍԱՅ ԱՆԻՆ

Կիւմրիի մէջ արդէն իսկ զգալի է առասպելական Անիի շունչը: Թերեւս Մայր տաճարի կրկնօրինակ եկեղեցին է պատճառը կամ երկու քաղաքներու աշխարհագրական մօտիկութիւնը:
Ճանապարհը կ'անցնի պատմական Երազգաւորս գիւղի, ապա, ջրասոյզ եղած Ջրափի մօտով: Աջ կողմին՝ Ախուրեանի հսկայ ջրամբարն է, ապա՝ Հայաստանը երկու մասի բաժնող անծայրածիր փշալարերու շարքը:
Յատուկ թոյլտուութեամբ, մեր առջեւ կը բացուին պետական սահմանի դռները: Մեր ինքնաշարժը կ'ուղղուի դէպի Անի եւ կ'անցնի «չէզոք գօտի» կոչուած հատուածը:
Ինչպիսի՞ն է Անին: Ծանօթ լուսանկարներու, երգերու ու կտաւներու երազանք-քաղաքը, ուր կը հանդիպէին աշխարհի ամենատարբեր մշակոյթները:
Իրականի ու երեւակայականի շփոթի մէջ էինք, երբ մեր ինքնաշարժը յաղթահարեց վերջին զառիվերը: Մէկ անգամէն մեր առջեւ փռուեցաւ Անին, իրականը, հայոց երբեմնի փառքի, կարօտի ու երգի, ցաւի ու հպարտութեան քաղաքը:
Մենք առաւելագոյն չափով մօտեցանք Ախուրեանի կիրճին: Մեր դիմաց Մայր տաճարն է, Տրդատ ճարտարապետի կառուցած անձեռակերտ հրաշքը, վիթխարի ու գեղեցիկ, հայրենի տան նման տաք ու հարազատ...
Տաճարի յետնամասին՝ նորակառոյց բնակավայր է, մի ամբողջ գիւղ, աջ կողմին՝ լուսանկարներէն ծանօթ ու հարազատ կիսաւեր Փրկչի եկեղեցին է, ձորակի մէջ՝ Տիգրան Հոնենցի եկեղեցին, որուն փլած գմբէթը կարկտուած է թրքավայել ոճով:
Ձախ կողմին, հեռուն, Ապուղամրենց Ս. Գրիգոր եկեղեցին է, որուն շուրջ «վերանորոգման» նպատակով շինարարական տախտակամած կը կառուցուի:
Հրուանդանի արեւելեան եւ արեւմտեան լանջերուն՝ վիմափոր կամ ժայռափոր բնակարաններ են, որոնցմէ ձախ՝ բաղնիքն է, որ կոչեր են Մանուչէի մզկիթ:
Բաղնիքի չորս ուղղահայեաց երկար պատուհանները թուրք սահմանապահներու համար կը ծառայեն որպէս յարմար դիտակէտ:
Բաւական է մտովի վերականգնել քաղաքի փառքի օրերը, հազար ու մէկ եկեղեցիները, կիսաւեր պարիսպները, եւ դարերը կը նահանջեն, քաղաքը շունչ կ'առնէ: Հզօր քաղաքակրթութիւն, առեւտրական եւ արհեստաւորական

համքարութիւններ ունեցող հայոց հոչակաւոր քաղաքի եռուզեռը կը վերադառնայ Անի:
Քաղաքին մէջ, մէկ եկեղեցիէն միւսը վազող զբօսաշրջիկներ են, թերեւս նաեւ՝ հայեր: Թուրք սահմանապահը մերթ ընդ մերթ կը յայտնուի դիտակէտին առջեւ եւ կը նայի մեր կողմը:
Անին հեռո՛ւ կը թուի, սակայն մօտ է այնքան, որ կը լսուին քաղաքի տեսարանին անյարիր ձայներ: Մենք խառն զգացումներով կը հեռանանք Անիէն: Ծանօթ երգի բառերը հանգիստ չեն տար. «Տեսնեմ Անին ու նոր մեռնեմ»...
Ո՛չ, Անին տեսնելէն յետոյ, յետոյ պէտք է ապրիլ, կրկին ու կրկին տեսնելու եւ օր մըն ալ զայն յաւիտեան վերագտնելու հաւատքով...
Ռոպերթ Առաքելեան (արեւմտահայերէնի վերածուած)

Գրական-Մշակութային

«ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ. 5000-ԱՄԵԱՅ ԵՒ 20-ԱՄԵԱՅ»

ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարութեան նախաձեռնութեամբ Սեպտեմբեր 5-ին տեղի ունեցաւ «Հայոց պետականութիւն. 5000-ամեայ եւ 20-ամեայ» խորագիրը կրող համահայկական մանկապատանեկան նկարչական մրցոյթ-փառատօնը: Միջոցառման բացման խօսքով հանդէս եկան՝ ՀՀ Գեղագիտութեան ազգային կեդրոնի տնօրէն Լեւոն Իգիթեանը , «ԱրմենՏել»ի գլխաւոր տնօրէն Իկոր Կլիմկոն , ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարար Արմէն Աշոտեանը, որ իր խօսքին մէջ ըսաւ. «Այս տարին խորհրդանշական է, քանի որ տօնում ենք Հայաստանի անկախութեան 20-ամեակը եւ ցուցահանդէսի խորագիրը մեզ տանում է դէպի անցեալ՝ 5000-ամեայ պատմութիւն ունեցող, միեւնոյն պահին գտնուում ենք

ներկայում եւ պատրաստւում ենք ցատկ կատարել դէպի ապագայ, վստահ լինելով, որ մենք ունենք այնպիսի սերունդ, որ իր վրայ կը կրի պետականութեան կերտման եւ զարգացման ողջ բեռը»:

Միջոցառումը նուիրուած էր հայոց պետականութեան պատմութեան: Փառատօնին ներկայացուեր են շուրջ 1000 աշխատանք՝ Սփիւռքի 18 երկիրներէն (ԱՄՆ, Արժենթին, Պելառուս,Պելճիքա, Պուլկարիա, Թուրքիա, Սպանիա, Իրան, Լիբանան, Չինաստան, Ռումինիա, Ռուսաստան, Սիրիա, Ուզպեքիստան, Ուքրանիա, Ուրուկուէյ, Ֆրանսա, Քուէյթ):
ՀՀ Գեղագիտութեան ազգային կեդրոնին մէջ ներկայացուած է առաջին փուլին ընտրուած 243 աշխատանք: Մասնակիցները իրենց նկարներուն մէջ պատկերեր էին հայոց պատմութեան կայացման եւ զարգացման համար կարեւոր անցքեր, երեւոյթներ, պետական ու մշակութային գործիչներու կերպարներ, որոնք յետագային պիտի տպագրուին ցուցահանդէսի ալպոմին մէջ:
Կազմակերպուեր է նաեւ համացանցային ցուցահանդէս «Facebook» ընկերային ցանցին մէջ, որու շրջանակէն ներս պիտի կայանայ առցանց քուէարկութիւն, եւ արդիւնքները պիտի հրապարակուին ցուցահանդէսի փակման օրը: Ցուցահանդէսը կը գործէ Սեպտեմբեր 5-էն մինչեւ Հոկտեմբեր 5-ը:

«Ճանաչել Զիմաստութիւն եւ Զխրատ. Հայկական Գրական Աւանդոյթը Քոնկրէսի Գրադարանին Մէջ” Ցուցահանդէս Ուաշինկթընի Մէջ

19 Ապրիլ 2012ին՝ ԱՄՆ Քոնկրէսի գրադարանին մէջ (Ուաշինկթըն) պիտի բացուի "Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ. Հայկական գրական աւանդոյթը Քոնկրէսի գրադարանին մէջ" (To Know Wisdom and Instruction: The Armenian Literary Tradition at the Library of Congress) ցուցահանդէսը, որ նուիրուած է հայ գրատպութեան 500ամեակին եւ ԵՈՒՆԵՍՔՕ-ի կողմէ Երեւանը 2012ին գիրքի մայրաքաղաք հռչակելուն: *Այս մասին կը տեղեկացնէ ԱՄՆ-ի Մասիս թերթը:*
"Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ. Հայկական գրական աւանդոյթը Քոնկրէսի գրադարանին մէջ" ցուցահանդէսին պիտի ներկայացուին գրադարանին մէջ Մերձաւոր Արեւելքի բաժինին մէջ պահպանուող ձեռագիր եւ տպագիր հայերէն գիրքերը:
23 Ապրիլ 2012էն մինչեւ 2013ի նոյն օրը Երեւանի մէջ պիտի տիրէ գիրքի տօնահանդէս: ՀՀ մշակոյթի նախարար Յասմիկ Պօղոսեան ըսած է, որ այս ձեռնարկը Երեւանի մէջ իրականացնելու համար ներկայացուած է լուրջ ծրագիր: Երեւանի եւ Հայաստանի մարզերուն մէջ կը նախատեսուին տեղադրել գիրքի կրպակներ, եւ քաղաքապետարանին մէջ արդէն կը քննարկուի անոր նախագիծը:

Երևանի մէջ կը կայանայ Երիտասարդական երգչախումբերու հանրապետական փառատօն-մրցոյթ

Սեպտեմբեր 25-էն Հոկտեմբեր 10-ը՝ Երևանի մէջ կը կայանայ Երիտասարդական երգչախումբերու հանրապետական փառատօն-մրցոյթ՝ «Մրցանակաբաշխութիւն 2011թ.»-ի շրջանակներէն ներս:
«Մրցանակաբաշխութիւն-2011»-ին կրնան միայն մասնակցիլ փրոֆեսիոնալ և սիրողական այն երգչախումբերը, որոնց անդամներու միջին տարիքը չի գերազանցեր 35-ը: Փառատօն-մրցոյթի կալա համերգն ու մրցանակներու յանձնումը տեղի կ'ունենան Հոկտեմբեր 14-ին, Արամ Խաչատրեան համերգասրահին մէջ:
Մայրաքաղաքին մէջ գործող երգչախումբերու համար փառատօն-մրցոյթի ունկնդրումը կը կայանայ Երևանի մէջ, իսկ մարզերու համար՝ համապատասխան մարզկեդրոններուն մէջ: Փառատօն-մրցոյթին համար սահմանուած է երեք մրցանակ, տիպլոմ և դրամական պարգև՝ 600 000-ական դրամ, ինչպէս նաև խրախուսական երեք մրցանակ, պատուոյ գիր և դրամական պարգև՝ 200 000-ական դրամ:
2007թուականէն կայացող մրցանակաբաշխութեան նպատակն է՝ նպաստել Հայաստանի գիտական և ստեղծագործական մտաւորականութեան գործունէութեան աշխուժացման, աջակցիլ երկրի մտաւոր ու մշակութային կեանքի աշխուժացման:
«Մրցանակաբաշխութիւն-2011»-ը կը նուիրուի Հայաստանի Հանրապետութեան 20-ամեայ յոբելեանին: Փառատօն-մրցոյթը կը կայանայ ՀՀ մշակոյթի նախարարութեան աջակցութեամբ: Կազմակերպիչներն են՝ Համաշխարհային հայկական քոնկրեսը, Ռուսաստանի հայերի միութիւնը և Հայաստանի երաժշտական ընկերութիւնը:

ՀԱՂԲԱՏԱՎԱՆՔԻ ՕՐ ԵՒ ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԱՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Սեպտեմբեր 11-ին՝ Խաչվերացի օրը, «Լոռուայ ձոր» հայրենակցական միութեան նախաձեռնութեամբ, ՀՀ մշակոյթի նախարարութեան, Լոռիի մարզպետարանի, Հայ առաքելական եկեղեցւոյ Գուգարաց թեմի եւ Հաղբատի գիւղապետարանի աջակցութեամբ կազմակերպուած էր ուխտագնացութիւն՝ նուիրուած Հաղբատավանքի օրուան եւ Սայեաթ-Նովայի յիշատակին: Հաղբատավանք ուխտի եկած էին Հայաստանի եւ Վրաստանի տարբեր վայրերէն: Բոլորը սիրով ու հիացմունքով կ'արտայայտուէին պատմական Հայաստանի խոշորագոյն հոգեւոր եւ կրթական կեդրոններէն մէկուն մասին, ուր ապրեր ու ստեղծագործեր է նաեւ Սայեաթ-Նովան: Միջոցառման ներկայ էին նաեւ Լոռիի մարզպետ Արթիւր Նալբանդեանը, փոխմարզպետ Արսէն Դարբինեանը, այլ պաշտօնեաներ: Խաչվերաց տօնին նուիրուած սուրբ պատարագը մատուցուեցաւ Հաղբատավանքի մայր եկեղեցիի մէջ՝ հանդիսապետութեամբ Գուգարաց թեմի առաջնորդ, գերաշնորհ Տէր Սեպուհ եպիսկոպոս Չուլճեանի: Զուգահեռաբար, Հազարաշէն եկեղեցւոյ մէջ, Երեւանէն ժամանած ու Լոռիի մարզի ասմունքողներու եւ երգիչներու կատարմամբ հնչեցին Սայեաթ-Նովայի ստեղծագործութիւնները: Սայեաթ-Նովայի երգերով հանդէս եկաւ «Հորովել» երգի-պարի համոյթի մենակատար, ՀՀ վաստակաւոր արտիստ Ստեփան Դալլաքեանը, ասմունքեցին հանրապետական փառատօնի դափնեկիրներ Նելլի Կոստանդեանը, Անի Շարբաթեանը, ինչպէս նաեւ բանաստեղծուհի Վեներա Վարդումեանը եւ ուրիշներ: Միջոցառումը կը վարէր ասմունքող, դերասան Իւան Անտոնեանը: Հաղբատավանքի զանգակատան մօտ տեղի ունեցաւ հանդիսութիւն, որ բացաւ «Լոռուայ ձոր» ՀՄ-ի նախագահ Սերգօ Երիցեանը՝ կարեւորելով օրուայ խորհուրդը: Սեպուհ եպիսկոպոս Չուլճեանը նոյնպէս կարեւորեց արդէն մասսայական դարձած հանդիսութեան նշանակութիւնը՝ իր օրհնութիւնը եւ բարեմաղթանքները յղելով միջոցառման մասնակից հարիւրաւոր մարդկանց: Թիֆլիսէն ժամանած պատուիրակութեան անունով, ներկաներուն ողջունեց եւ

վրացերէնով Սայեաթ-Նովայի գործերէն կարդաց գրող, թարգմանիչ Գիվի Շահնազարը: Կարօտաբաղձ եւ ջերմ խօսք ըսաւ Վրաստանի հայ նկարիչներու միութեան նախագահ, գեղանկարիչ Մերուժան Շահումեանը: Հայաստանի գրողներու միութեան եւ լոռեցի գրողներու անունով խօսք ըսաւ տողերուս հեղինակը՝ կարեւորելով նման հանդիսութիւններու նշանակութիւնը երիտասարդութեան ճաշակի ձեւաւորման գործին մէջ: Ելոյթ ունեցան բանաստեղծ Սուրէն Մուրադեանը, լրագրող, արձակագիր Վանիկ Սանթրեանը եւ ուրիշներ: Սայեաթ-Նովայի երգերէն կատարեցին Ստեփան Դալլաքեանը, «Արատտա» հայ խօսքի ու երգի համոյթի ղեկավար Արսէն Ղամբարեանը, աստունքեցին Ն. Կոստանդեանը, Ա. Շարբաթեանը, Հռիփսիմէ Սարգսեանը եւ Իվան Անտոնեանը:

ՖՐԻՏԵՈՖ ՆԱՆՍԷՆԻ 150-ԱՄԵԱԿԸ



Այս տարի լրացաւ նորվեկիացի գիտնական, բեւեռախոյզ, ովկիանոսագէտ, հասարակական գործիչ, Խաղաղութեան Նոպելեան մրցանակի դափնեկիր, մեծ մարդասէր Ֆրիտեոֆ Նանսէնի, բացառիկ հնարաւորութիւններով օժտուած գիտնականի եւ հասարակական գործիչի ծննդեան 150-ամեակը: Նանսէնը հայ ժողովուրդի ճակատագրին մէջ վճռական դեր է խաղացեր՝ Եղեռնէն մազապուրծ հազարաւոր հայերու համար նանսէնեան անձնագիրները ապահովեցին կեցութեան ու տեղափոխման իրաւունք:
Նանսէնի ձեւակերպումով՝ մարդկութեան պատմութեան մէջ չկայ մի բան, որ իր հաւասարն ունենայ 1915 թուականին սկսուած ջարդերու հետ: Ապտիւլ Համիտի ջարդերը չնչին են երիտթուրքերու կատարածին համեմատութեամբ: Նանսէնի 150-ամեակին նուիրուած ՀՀ Ազգային գրադարանին մէջ, Սեպտեմբեր 13-ին տեղի ունեցաւ միջոցառում, որուն ընթացքին բացուեցաւ Նանսէնին նուիրուած հայերէն, ռուսերէն, անգլերէն, գերմաներէն, նորվեկիերէն, ֆրանսերէն գրականութեան եւ մամուլին մէջ տպագրուած յօդուածներու ցուցահանդէսը:

«Ֆրիտեոֆ Նանսէն» հիմնադրամի հիմնադիր նախագահ Ֆելիքս Բախչինեանը տեղեկացուց, որ Հոկտեմբեր 9-ին, մէկ ամիս ուշացումով, տօնուելու է Նանսէնի 150-ամեակը, որուն շրջանակներէն ներս Հայաստան կը ժամանէ Նորվեկիայի ԱԳ նախարար Եոնաս Գահր Շտեորէյն: Այդ օրը կը նախատեսուի կանգնեցնել Նանսէնի արձանները՝ Աբովեան-Մոսկովեան փողոցներու խաչմերուկին, Նանսէնի փողոցին մէջ եւ Նանսէնի անուան դպրոցի ու մանկատան առջեւ: Վանաձորի մէջ կը բացուի Նանսէնի թանգարանը: Կը կատարուի նաեւ համերգային ծրագիր, որուն կը մասնակցին հայ եւ նորվեկիացի արուեստագէտներ, կը հնչեն նորվեկիացի եւ հայ կոմպոզիտորներ՝ Էդուարդ Գրիգի եւ Արամ Խաչատրեանի ստեղծագործութիւնները, կազմակերպութեամբ ՀՀ մշակոյթի նախարարութեան եւ «Ֆրիտեոֆ Նանսէն» հիմնադրամի: Ինչ կը վերաբերի ՀՀ-ի եւ Սփիւռքի մէջ՝ նանսէնեան անձնագիրներ ունեցող մարդկանց տուեալներու պազա ստեղծելուն, Ֆելիքս Բախչինեանը ըսաւ, որ ՀՀ սփիւռքի նախարարութիւնը այդ նախաձեռնութեամբ չզբաղիր: Բախչինեանը յաւելեց, որ Նանսէնի 150-ամեակին նուիրուած միջոցառումները տեղի կ'ունենան «Ֆրիտեոֆ Նանսէն» հիմնադրամի նախաձեռնութեամբ, եւ պետական աջակցութիւն չեն ստացեր: Մանանա Յովակիմեան (արեւմտահայերէնի վերածուած)

Պոլսահայ Համայնքի Օրեր Հայաստանի մէջ

Սեպտեմբերի 17-ին՝ ՀՀ սփիւռքի նախարարութեան նախաձեռնութեամբ կայացող «Հայաստանում պոլսահայ համայնքի օրեր» ծրագրի շրջանակներէն ներս, «Առնօ Բաբաջանեան» համերգային դահլիճին մէջ՝ տեղի ունեցաւ «Մարմարա» օրաթերթի 70-ամեայ յոբելեանին նուիրուած միջոցառումը:
Միջոցառման ողջոյնի խօսքով հանդէս եկաւ ՀՀ սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանը:
Ելոյթ ունեցան «Սփիւռք» գիտաուսումնական կեդրոնի տնօրէն Սուրէն Դանիէլեանը, Հայաստանի ժուռնալիստների միութեան նախագահ Աստղիկ Գէորգեանը, Հայաստանի գրողների միութեան նախագահ Լեւոն Անանեանը, ԳԱԱ թղթակից անդամ Արտեմ Սարգսեանը, ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Նաղաշ Մարտիրոսեանը, «Մարմարա» թերթի գլխաւոր խմբագիր Ռոպեր Հատտէճեանը եւ ուրիշներ:
«Մարմարա» օրաթերթի 70-ամեայ յոբելեանին նուիրուած համերգային երեկոն վարեց Ազատ Գասպարեանը: Համերգային ծրագրով հանդէս եկան երգչուհի Լիւսի Քահվէճեանը եւ դաշնակահար Համասփիւռ Մանուկեանը:

Կարին Յովհաննիսեանի գիրքի շնորհահանդէսը

6 Սեպտեմբեր 2011թ., Երեւան.- 6 Սեպտեմբեր 2011-ին՝ Եղիշէ Չարենցի տուն-թանգարանին մէջ տեղի ունեցաւ Կարին Յովհաննիսեանի «Գերդաստան ստուերաց» գիրքի շնորհահանդէսը: Այն թարգմանաբար տպագրուեր է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան կողմէ, թարգմանիչը Սամուէլ Մկրտչեանն է:

Շնորհահանդէսը բացաւ ու ներկաներուն ողջունեց Չարենցի տուն-թանգարանի տնօրէն Լիլիթ Յակոբեանը: Ելոյթ ունեցան Հայաստանի գրողներու միութեան նախագահ Լեւոն Անանեանը, թարգմանիչ Սամուէլ Մկրտչեանը, հեղինակի հայրը՝ Ռաֆֆի Յովհաննիսեանը, որ գիրքի հերոսներէն մէկն է: Առանձին յուզիչ դրուագներու շարադրումով՝ երեկոն եզրափակեց Կարին Յովհաննիսեանը:

«Գերդաստան Ստուերաց»-ի մէջ պատկերուած է գերդաստանի երեք սերունդներու կեանքը՝ իրենց ապրած պատմական ժամանակաշրջանի բովով: Կարինի մեծ պապը՝ Գասպարը, կորսնցուց հայրենիքը, իր Բազմաշէն գիւղը Արեւմտեան Հայաստանի Խարբերդի նահանգին մէջ, ականատեսը եղաւ ահաւոր Եղեռնի հազարաւոր զոհերու եւ չարագործութիւններու, զինուորագրուեցաւ ցասման ու վրեժի պայքարին: Պապը՝ Ռիչարտը, ծնելով Քալիֆոռնիոյ նահանգի Տուլարի փոքրիկ քաղաքին մէջ, թողուց հօր ազարակը՝ ժամանակի փորձութիւններէն եւ ժխտումի ուժերու ոտնձգութիւններէն պաշտպանելու կորուսեալ Էրկրի պատմութիւնը: Իսկ Միացեալ Նահանգներու հանգիստ ու բարեյարմար պայմաններուն մէջ մեծցած, համակողմանի փայլուն կրթութիւն ստացած Ռաֆֆին նախընտրեց վերադառնալ մայր Հայրենիք:

Տեսակէտ

ՀԱՅԸ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ Է ԿՐՈՒՄ՝ ԻՆՔՆ ԻՐԵՆԻՑ

«Ուղիղ գծով գնում ենք ոչ կենսունակ ժողովրդագրական օրկանիզմ դառնալու ճանապարհով» Ռուբէն Եկանեան, ժողովրդագիր

Եթէ վերոյիշեալ տողերը մասնագիտական լեզուից թարգմանենք պարզ մարդկային լեզուի, ապա միտքը շատ պարզ է՝ մեռնում ենք: Երբ տարիներ առաջ գիտաժողովներից մէկի ժամանակ ես հնչեցրի նոյն այս միտքը սփիւռքահայ սուտ գիտնականներից մէկն ինձ մեղադրեց «ապոկալիպտիկ սցենարներ» մոգոնելու մէջ: Իհարկէ, դառը ճշմարտութիւնը նկատել չտալը միշտ էլ յարմար է: Հիմա ամէն ոք է խօսում Հայաստանում առկայ ժողովրդագրական աղէտի մասին, սակայն այն յաղթահարելու ուղիները չեն ասում: Անշուշտ ինչ որ բան ասում են՝ պետութիւնը միջոցներ պիտի ձեռք առնի:
Իսկ որևէ մէկը հաշուե՞լ է, թէ ինչքա՞ն փող է հարկաւոր դրա համար: Իմ հաշուարկներով մեզ լրացուցիչ անհրաժեշտ է մեր ներկայ պիւտճէի կրկնակին: Ահա այստեղ ծառանում է մշտական հարցը՝ որտեղի՞ց այդքան փող: Եկէք չզբաղուենք ինքնախաբէութեամբ: Իրր, երբ լուծուի Ղարաբաղի հարցը կամ, երբ բոլորը սկսեն հարկերը մուծել, ապա ամէն ինչ լաւ կը լինի: Նախ, երկուսն էլ մօտակայ տասնամեակում չլինելիք բաներ են: Յետոյ, իհարկէ աւելի լաւ կը լինի եթէ այդպէս լինի, բայց մեծ առումով դա բաւարար չէ ներկայ ժողովրդագրական խորխորատից ելնելու համար:
Համաշխարհային պատմութեան մէջ դեռևս ոչ մի ժողովուրդ 1,9-ից ցածր ծնելիութեան ցուցանիշի դէպքում (առանց արտագաղթի, պատերազմի ու երկրաշարժի) ինքնուրոյնաբար դուրս չի եկել ճգնաժամից: Պարզ ասած անհրաժեշտ է, որ իւրաքանչիւր տարի պետութիւնն իրականացնի բազմազաւակութեան խրախուսման բազմամիլիարդանոց, կրկնում եմ, բազմամիլիարդանոց, ծրագրեր:
Աւելի քան հինգը տարի առաջ ես ամէն ինչ դրեցի մի կողմ և սկսեցի ամբողջութեամբ զբաղուել Հայկական հարցի լուծման հնարաւոր տարբերակներով: Դա սկսեցի անել ոչ թէ այն պատճառով, որ պարապ էի մնացել կամ ուզում էի աւելի մեծ ու հզօր Հայրենիք ունենալ, (որն իհարկէ ուզում եմ), այլ եկայ այն պարզ ու ցաւալի գիտակցութեանը, որ Հայկական հարցի լուծումն է մեր փրկութեան միակ

ուղին:
Եթէ առաջիկայ տասնամեակում մենք չլուծենք Հայկական հարցը այս ներկայ Հայաստանն էլ չենք ունենայ: Հայկական հարցի լուծման ուղին հանգամանալից ներկայացուած է առանձին հայեցակարգի մէջ, սակայն հիմա դրան չեմ անդրադառնայ: Ընթերցողի ուշադրութեանն եմ ներկայացնում նշեալ հայեցակարգի նախաբանը՝ այն ակնկալիքով, որ աւելի մեծաթիւ մարդիկ կը հասկանան, որ բացի Հայկական հարցը լուծելուց մենք փրկութեան այլընտրանք չունենք:
Հին աշխարհում մի սովորութիւն կար. վատ լուր բերողի գլուխը կտրում էին: Երբ երեխայ էի, չէի հասկանում՝ ինչո՞ւ են մարդիկ ստանձնում գուժկանի մահաբեր առաքելութիւնը: Յետոյ հասկացայ: Ազգային, հասարակական շահի տեսանկիւնից ոչինչ չկայ աւելի բարձր, քան ճշմարտութիւնը: Պարզ, երբեմն դաժան ճշմարտութիւնը կենսական նշանակութիւն ունի, որովհետև առանց բաց աչքերով իրականութեանը նայելու հնարաւոր չէ գտնել փրկութեան ուղին:
Մի՞թէ կարող է կոյրը կոյրին առաջնորդել: Հիմա մեր հերթն է բաց աչքերով նայելու իրականութեանը:
Հայ ժողովուրդի լինելիութիւնը նրա հինգհազարամեայ գոյութեան ընթացքում երբեք այսքան վտանգուած չի եղել, որքան այժմ: Սա պայմանաւորուած է Հայաստանում ձևաւորուած ժողովրդագրական սպառնալից իրավիճակով՝ անշեղօրէն կրճատուող ծնունդով, հասարակութեան ծերացմամբ, մահացութեան աճով, ինչպէս նաև չընդհատուող արտագաղթով:
Պատճառները բազմաթիւ են, սակայն հիմա դրանք չենք քննարկի: Ըստ ՄԱԿ-ի ժողովրդագրական տուեալների, Հայաստանի բնակչութիւնը մինչև 2025թ. կը նուազի 25%-ով: Միևնոյն ժամանակ Ատրպէյճանի բնակչութիւնը կ'աճի 31%-ով, իսկ Թուրքիայինը՝ 43%-ով: Յիսուն տարի յետոյ Հայաստանում կը մնայ ներկայ բնակչութեան կէսը:
Ցանկացած հասարակութեան պարզ վերարտադրութիւնն ապահովելու համար անհրաժեշտ է, որ ծնելիութեան ցուցանիշը լինի առնուազն 2.11: Ծնելիութեան 1.3 ցուցանիշ ունեցող հասարակութիւնները դատապարտուած են վերացման: 2007թ. Հայաստանում ծնելիութեան ցուցանիշը եղել է 1.348: Անգամ ցեղասպանության տարիներին դրութիւնն այսքան ողբերգական չէր: Պարզ էր, որ ինչոր քանակութեամբ հայեր փրկուելու էին, որոնք էլ իրենց հայրենիքի մի հատուածվի վրայ վերաշինելու էին իրենց տունը և շենացնելու էին հայրենիքը զաւակներով: Հարցը ժամանակի մէջ էր՝ շատ կը փրկուէին, քիչ ժամանակ պէտք կը լինէր ազգը վերականգնելու համար, քիչ կը փրկուէին՝ շատ ժամանակ պէտք կը լինէր: Յաւերժութեան զաւակը՝ ժամանակը, մեր դաշնակիցն էր: Հիմա ժամանակը մեր թշնամին է. 5-10 տարի յետոյ Հայաստանի մէջ, առաջին անգամ խաղաղութեան տարիների ընթացքում, լոյս աշխարհ եկած երեխաների թիւը զիջելու է այս աշխարհից գնացածների թուին:
Այսինքն մենք սկսելու ենք վերջանալ, ինչպէս ջուրը առուի մէջ՝ աղբիւրի ցամաքելուց յետոյ, ինչպէս լոյսը երկնքում՝ արևը մայր մտնելուց յետոյ: Քսանմէկերորդ լուսաւոր դարը կարող է մեր վերջինը լինել: Վերջի սկիզբը արդէն դրուած է: Իհարկէ ազգի վերացում չի նշանակում ազգի անհատների վերացում: Թերևս մէկ-երկու հարիւր տարի ինչ-որ համայնքներ կը լինեն, ինչ-որ անհատներ

ազգի փրկութեան ծրագրեր կը մշակեն, ինչ-որ կուսակցութիւններ ազգի փրկութեան համար դրամ կը հաւաքեն: Գուցէ մինչեւիսկ ինչ-որ վարչատարածքային միաւոր էլ լինի՝ Ermenistan vilayeti: Անգամ գուցէ նրա ղեկավարը նախագահ կը կոչուի ...:
Սակայն դա Հայաստան չի լինի, այլ կը լինի ուրիշի փարախում կապուած մատաղացու գառ, որին ցանկացած պահին մատաղ կ'անեն փարախի տիրոջ զաւակի ողջութեան համար: Յիշո՞ւմ էք, մեզ մի անգամ արդէն մատաղ արել են համաշխարհային յեղափոխութեան յաղթանակի ճանապարհին:
Հիմա անդրադառնանք մի բնական հարցի. իսկ ի՞նչ անել: Պատասխանը շատ պարզ է՝ պէտք է խրախուսել բազմազաւակութիւնը, այսինքն՝ Հայաստանում ծնուած առաջին երեխայի համար մինչև չափահասութեան տարիքը իւրաքանչիւր ամիս ընտանիքին պէտք է տալ հարիւր տոլար, կ'ուզէք՝ համարժէքը դրամով, երկրորդի համար՝ երկու հարիւր, երրորդի համար՝ երեք հարիւր, և այդպէս շարունակ: Դրա համար տարեկան պէտք կը լինի լրացուցիչ 2-3 մլրդ տոլար:
Այդքան էլ պէտք կը լինի ենթակառոյցների վերականգնման, առողջապահական և կրթական համակարգերի նորացման, կարճ ասած, երկիրը երկիր դարձնելու համար: Իհարկէ, Հայաստանում իւրաքանչիւր տարի լրացուցիչ ծախսուած 5-6 միլիարդ տոլարը էապէս կը խթանի նաև երկրի տնտեսութիւնը, կը ստեղծի նոր աշխատատեղեր և, բնականաբար, հարկերի, մաքսերի, տուրքերի և այլ գանձումների տեսքով կ'ապահովի դրամական նոր մուտքեր:
Առաջին հայեացքից տարեկան 7-8 միլիարդ տոլար ծախսային մասը ՀՀ ներկայ պիւտճէի համեմատ (2.7 մլրդ դոլար) հսկայական է թւում, սակայն իրականութեան մէջ այն ընդամէնը, օրինակ, Եւրոպայի ոչ հարուստ երկրներից մէկի և չափորոշիչներով մեզ մօտ՝ Լիտուայի 2008թ. պիւտճէի ծախսային մասի հազիւ կէսն է:
Այժմ անդրադառնանք ամենակարևոր հարցին. Իսկ որտեղի՞ց այդքան փող: Ակնյայտ է, որ հարկերի հաւաքման տեսանկիւնից Հայաստանը երբեք Զուիցերիա, իսկ մարդու իրաւունքների տեսանկիւնից՝ երբեք Շուեդիա չի դառնայ: Ենթադրենք դարձաւ, յետոյ՞: Յետոյ այն, որ Հայաստանի պիւտճէն լաւագոյն դէպքում կարող է կրկնապատկուել և մենք կը հաւասարուենք Ալպանիային: Արդեո՞ք մեր երազանքը հայկական Ալպանիա կառուցելն է: Իհարկէ՝ ոչ:
Անգամ կրկնապատիկ պիւտճէի դէպքում մենք չենք կարող մեզ թոյլ տալ տարեկան 2-3 մլրդ տոլար ծախսել ազգապահպան, իսկ աւելի պարզ լեզուով, վերարտադրողական ծրագրերի վրայ: Ակնյայտ է, որ այսօրուայ մեր վիճակը խուլ արձագանգն է Հայոց ցեղասպանութեան և հայրենազրկման: Չլինէր ցեղասպանութիւնը, մենք կը լինէինք ավելի շատ, աւելի մեծ ու բարգաւաճ հայրենիքի սահմաններում: Գրեթէ հարիւր տարի առաջ ցեղասպանի բարձրացրած կացինը մեր օրերում հասցրեց իր վերջին հարուածը: Մեր ազգի կենաց ծառն այլևս անկարող է ինքնուրոյնաբար ապաքինելու իր վէրքերը:
Հետևաբար, մեր ազգային գոյութեան 2 մեծագոյն ողբերգութիւնները՝ ցեղասպանութիւնն ու հայրենազրկումը, պիտի դառնան մեր ազգային գոյութեանը նոր աւիշ հաղորդող երկու հիմնական աղբիւրները: Մենք այլընտրանք չունենք: Մի բան բոլորիս համար պիտի պարզ լինի. հայկական հարցի լուծումը

մասնագիտական մտավարժանք կամ տեսական գլուխկոտրուկ չէ: Դա հայ ժողովրդի գոյատևման միակ ուղին է:
Կը սկսենք առաջիկայ 10 տարուայ մէջ Թուրքիայից տարին 3-5 մլրդ տոլար նիւթական կորուստների հատուցում և Թուրքիայի կողմից հայկական գոյքի ու տարածքների օգտագործման վարձավճար ստանալ, ապա, միգուցէ, դուրս կը գանք ժողովրդագրական անդունդից, ապահով գոյութեան ու տնտեսական զարգացման հիմքեր կը ստեղծենք, չենք կարողանայ՝ կը գնանք միանալու մեր նախկին հարևաններին՝ բաբելացիներին, շումերներին և այլոց:
Առաջարկուող հայեցակարգն իրատեսական է, որովհետև ունի զօրաւոր իրաւական հիմքեր և շահագրգիռ քաղաքական ուժեր: Սակայն մենք ոչնչի չենք հասնի, քանի դեռ մեր իրաւունքների վերահաստատումն ու մեր կորուստների դիմաց հատուցման ծրագիրը համազգային նպատակ ու պետական քաղաքականութիւն չի դարձել: Մանր յաջողութիւններն ու դրանց մասին մեծ-մեծ խօսելը երկիրը չեն փրկի:
Քաղաքական շամանութեամբ երկիր պահել հնարաւոր չէ:
Եկել է գործնական ծրագրերի ժամանակը:
Մեր ազգային էպոսի վերջին ճիւղի հերոսը՝ Փոքր Միհրը, պարտութեան մատնեց հարազատ հօրը՝ անպարտ Սասունցի Դաւթին, ապա անզաւակ գնաց անէանալու Ագռաւաքարի որջի մէջ:
Միթէ՞ հայ ժողովուրդը, պարտութիւն կրելով ինքն իրենից, պիտի անզաւակ փակուի պատմութեան Ագռաւաքարի մէջ:
Արա Պապեան

«Պէտք չի ժողովրդին վերաբերուել որպէս հպատակների, որոնց պէտք է խուզել, կթել» Երանուհի Սողոյեան

«Իհարկէ կայ արտագաղթ, և այն արդէն վտանգաւոր չափերի է հասնում,-ասում է Շիրակի թեմի առաջնորդ Միքայէլ եպիսկոպոս Աջապահեանը:- Հիմա չեմ յիշում, թէ որ կազմակերպութիւնն էր ասել վերջերս, որ դա համազգային աղէտ է, ու ես համամիտ եմ այդ մտքի հետ: Այո, դա համազգային աղէտ է: Անգամ BBC-ով էդպիսի մի նիւթ գնաց, որ գիւղերը դատարկւում են, միայն կանայք են մնացել, և այդ կանանց ամուսինները օտար երկրներում երկրորդ ընտանիքն ունեն: Սա նոյնպէս

անհանգստացնող հանգամանք է, սա էլ իր տեսակի մէջ է աղէտ»: Ոչ միայն Գիւմրին է դատարկւում, գիւղերն արդէն դատարկուած են, փաստում է Սրբազան հայրը, որ իր հովուական պարտքն է համարում գրեթէ ամէն կիրակի լինել մարզի գիւղական համայնքներում: Թեմի առաջնորդի կարծիքով՝ բնակչութեան նօսրացումն անզէն աչքով էլ է նկատելի: «Վերջերս Գիւմրիում մի թուրք տուրիստ, իմանալով, որ թեմի առաջնորդը թուրքերէն է խօսում, այցելեց ինձ: Պարզուեց, որ այս մարդը երկար տարիներ է ապրում է Մոսկուայում, ու խօսքի մէջ նշեց, թէ այնտեղ «խոպան» գնացած բոլոր հայերն ունեն երկրորդ ընտանիք: Ես վատ զգացի, որովհետև նոյնիսկ թուրքի պատկերացումներն են հայի մասին փոխուել: Մեր հայ ընտանիքների պատկերն է աղաւաղուել: Թուրքը միշտ իմացել է, որ հայը բարոյականութեան չափանիշ է, իսկ այսօր լրիւ այլ կերպ ենք ներկայանում: Սա համազգային աղէտ չի՞, ինչ է»,- մտահոգւում է Միքայէլ Սրբազանը:
«Եւ երբ այս մասին խօսում ես, անմիջապէս ելնում է մէկը և յայտարարում, թէ հոգևորականը, փոխանակ լաւատեսութեամբ լաւ բանի մասին խօսի, վատ բաներից է խօսում, փոխանակ լաւատեսութիւն ներշնչի՝ յոռետեսութիւն է ներշնչում: Անպայման կը գտնուի մէկը ձեր ընթերցողներից, որ սա կարդալիս կը յայտարարի, թէ Սրբազանի տուեալները չեն համապատասխանում իրականութեանը, չկայ արտագաղթ, ահագնացող չեն չափերը, ամէն ինչ նորմայի սահմաններում է և այլն: Բայց այդ մարդիկ մոռանում են, որ մենք պատասխանատու ենք մեր հօտի ամէն մի անդամի համար, որ մենք ևս պարտաւոր ենք հոգ տանել նրանց մասին, որ մեր սիրտը ցաւում է ամէն մի հեռացողի համար, ու մենք իրաւունք չունենք լռելու»,- նշում է հոգևոր հայրը:

«Չի գնում նա, ով հնարաւորութիւն չունի, և նա ով ապահովուած է, այսինքն՝ հնարաւորութիւն ունի իր գլուխն այստեղ էլ պահելու,- շարունակում է իր դիտարկումները թեմի առաջնորդը:- Եւ մեղադրել գնացողներին մի տեսակ չի ստացւում: Հացի խնդիր կայ: Օրինակ՝ Շիրակի թեմում առկայ հաստիքացուցակն ուռճացուած է, ու մենք այդ քայլին գնացել ենք գիտակցաբար: Թէպէտ բարձր չէ վարձատրութիւնը, և իր էութեան մէջ տուեալ մարդու գործն էլ ոչ այնքան անհրաժեշտ, բայց մենք այդպիսով փորձում ենք նրան կապել այս քաղաքին, որ

չհեռանայ, ընտանիքը չլքի: Եւ ես շատ յաճախ քննադատութեան եմ արժանանում, թէ «Սրբազան, աւելորդ մարդկանց ես պահում»: Ես դա գիտեմ, բայց նաև գիտեմ, որ այդ մարդը գնալու տեղ չունի, որ այդ մարդը ընտանիք է պահում»: Միքայէլ Սրբազանի կարծիքով՝ խնդիրը կառավարումն է: Ժողովրդի մի զգալի հատուած իր ապագան կապում է դրսի հետ: Իշխանութիւններն իրականացնում են «Արի տուն» ծրագիրը, բայց դրա փոխարէն արժէր, որ տնեցիներին պահէին տանը: Հարևան Վրաստանի նախագահի մասին ասում են, որ ծամում է փողկապը, բայց դա չի խանգարում նրան բարեփոխումներ կատարելու: Թեմի առաջնորդը համոզուած է, որ պէտք չէ ջայլամի քաղաքականութիւն որդեգրել, միայն դրական բաներից խօսելով՝ հնարաւոր չէ առկայ խնդիրը լուծել: «Ինչո՞ւ հարևան պետութիւնում հնարաւոր է ամէն բան փոխել, իսկ մեզ մօտ՝ չէ: Մեր ժողովուրդը յարմարուող է: Այսօր նրա առաջ խնդիր է դրուած գնալ 9 ամսով խոպան ու վերադառնալ, ինքը գնում է, այսինքն՝ յարմարուել է այդ վիճակին: Եթէ հային հրամցուի լաւը, ինքն անպատճառ դրան կը յարմարուի: Հասարակ բան. ասացին մի կէս բերան, որ պիտի ամրագօտիներ կապեն, բոլորը կապեցին,- ասում է Միքայել Սրբազանը:- Կը նշանակի՝ ցանկութիւն է պէտք, կամք է պէտք բացասականը դրականի փոխելու: Հարկային տեռորը թուլացնել է պէտք: Վրաստանում այսօր խորհրդային արտադրութեան մեքենա չկայ, չես տեսնի, որովհետև այդ երկրի իշխանութիւնն այնպէս է արել, որ իր երկրի բնակիչը կարողանայ շատ հեշտութեամբ արտասահմանեան մեքենաներ ներկրել՝ առանց 30 տոկոս հարկ վճարելու: Բարձր հարկեր սովորաբար դրւում են ներկրողի վրայ: Երբ դու այդ ապրանքից քո երկրում արտադրում ես, դրանով պաշտպանում ես քո արտադրողին, խթանում քո ներքին շուկան: Բայց մի՞թէ մենք մեքենայ ենք արտադրում: 10 տարի առաջ, երբ մտնում էիր Վրաստան, Վրաստանը քեզնից յետ էր, այսօր մտնում ես Վրաստան, քեզանից մի քանի քայլ առաջ է: Ու հաւատացէք, որ դրա պատճառը ոչ ծովն է, ոչ էլ տուրիզմը: Սրանով ուզում եմ ասել, որ պէտք չի ժողովրդին վերաբերուել որպէս հպատակների, որոնց անպատճառ պէտք է խուզել, կթել: Պէտք է սիրել, հոգալ մարդկանց մասին առանց «փայ» պահանջելու»:

Հայաստան | Վերլուծական

Ո՞վ է, զո՞վ համարեն Հայաստան, որ վերածուեր է իր զաւակներու «սպանդանոցի»ն

Նախագահական նստավայրին մէջ, ընդունելով աշակերտական օլիմպիատաներու յաղթող և մրցանակակիր հայաստանցի երախաներուն, Սերժ Սարգսեանը յայտարարեր է, թէ անոնք վստահ կարող են ըսել՝ «այո, Հայաստանը ես եմ»: Իսկ ի՞նչ կարող են ըսել ըսենք այն պատանիները, որոնք Հայաստանի համար կ'երթան բանակ, ու այնտեղէն կը վերադառնան սպանուած: Ի՞նչ կարող են ըսել անոնց հարազատները, որոնք կ'ողբան իրենց զաւակներուն մահը:

Ի՞նչ կ'ըսեն անոնք, ո՞վ է Հայաստանը, զո՞վ համարեն Հայաստան: Հայաստան, որ վերածուեր է իրենց զաւակներու «սպանդանոցի»ն: Շատ շատերը այս բնորոշումը կոպիտ, նոյնիսկ վիրաւորական կարող են համարել: Սակայն Հայաստանի մէջ սկսեր է թագաւորել մի այնպիսի իրականութիւն, ուր արդէն մարդկային միտքի և հոգիի ամբողջ դիմադրողականութեան լարումն իսկ անկարող կ'ըլլայ իրականութեան մասին փոքր ինչ խորութեամբ մտածելու պարագային, բանականութիւնը զերծ պահել հոգեկան ցնցումներէն:

Ի՞նչ անուն տալ ընդհանրապէս այս հակադրութեան, երբ նախագահական նստավայրին մէջ գեղեցիկ ելոյթներ կը հնչեն գիտելիքի, ինտելեկտի, ապագայի, կրթուած ու դաստիրակուած հասարակութիւն ստանալու համար, իսկ բանակին մէջ կը շարունակուին անհասկնալի և անհեթեթ պայմաններու մէջ սպանուիլ երիտասարդները: Այն միջոցին, երբ Սերժ Սարգսեանը գեղեցիկ ապագայ կը նկարագրէր աշակերտներու համար, երևանեան տուներէն մէկուն մէջ կ' ողբային Օգոստոսի 26-ին Եղնիկներ կոչուող զօրամասին մէջ զոհուած 18-ամեայ պատանիի մահը: Ու այդ մասին ոչ մէկ խօսք՝ ոչ նախագահականէն, ոչ

հեռուստատեսութեամբ:

Այդ մասին ընդունուած չէ խօսիլ, երևի այն պատճառով, որ Սերժ Սարգսեանը կը զզուի բանակը քննադատողներէն: Ու այդպէս Հայաստանի մէջ, կողք կողքի կը գոյատևեն փողերու մէջ լող տուող շքեղութիւնն ու ցոփութիւնը, գեղեցիկ կարգախօսներու մէջ լող տուող քարոզչական առաջադիմութիւնը, և լկտիութեան մէջ խեղդուող մարդկային ողբերգութիւնը: Պերճանքն ու թշուառութիւնը Հայաստանի մէջ կը քայլեն կողք կողքի, իսկ իշխանութիւնը կարծես թէ իր պարտքը կը համարէ պերճանքը պաշտպանել թշուառութեան աւելորդ պատկերէն: Պերճանքը կը պաշտպանուի, իսկ Հայաստանը կը մատնուի անպաշտպան թշուառութեան: Սա գոյներու խտացում չէ, սա այն իրականութիւնն է, որուն մենք ականատես կ'ըլլանք ամէն օր, որ մեր մէկ մասը կը մատնէ անուշադրութեան, որուն վրայ մեր միւս մասը նոյնիսկ սինիք կը ծիծաղի, և որմէ մեր մէկ այլ մասն ալ կը թողու ու կը փախչի, այլևս ուժ չունենալով, իսկ մի մասն ալ պարզապէս անզօրութենէն կը խելագարուի:

Բայց բարեբախտաբար կայ նաև մեր մի այլ մասը, որ կը պայքարի, կը պայքարի այդ իրականութիւնը փոխելու համար կը, պայքարի առանց յուսահատելու, առանց իր փոքրաթիւ ըլլալէն վհատելու, կը պայքարի Հայաստանի մէջ այդ ողբերգական հակադրութիւնը փոխելու համար:

Մուսա Միքայելեան (արեւմտահայերէնի վերածուած)

Տիգրան Խզմալեան. «Ոչ թէ անկախացման 20-ամեակ, այլ չանկախացման 20–ամեայ տարելից»

«Սարդարապատ» շարժման նախաձեռնող խումբի անդամ **Տիգրան Խզմալեանը** Սեպտեմբեր 2-ին, լրագրողներու հետ հանդիպման ժամանակ, խօսելով Հայաստանի Հանրապետութեան 20–ամեայ անկախութեան մասին՝ ըսեր է, որ շատ կարևոր է հասկնալ՝ ի՞նչը կ'անուանենք անկախութիւն, և ինչի՞ն է նման մեր 20–ամեայ երկիրը:
–Այն այսօր նման է բանակում նուաստացած ու խոշտանգուած 20–ամեայ պատանու,–նման կարծիք է յայտներ բանախօսն ու աւելցուցէր է,–**այն, ինչ ունենք,**

չանկախացող, չանկախացած և անկախանալու հնարաւորութիւնները կորցնող պետութիւն է:
Իր խօսքերով՝ **մենք պետք է նշենք ոչ թե անկախացման 20–ամեակը, այլ չանկախացման 20–ամեայ տարելիցը:**
Ըստ Տ. Խզմալեանի՝ մեր պետութեան համար ամենասարսափելի վտանգը ոչ թէ ատրպէյճանական սպառնալիքներն ու թուրքական շրջափակումն են, այլ, նախ և առաջ, տեղական բռնապետները:
–Իշխանութիւններն առաջնորդւում են մի պարզ գաղափարով՝ ժողովրդի թալանով, և զաւթիչների հետ ցանկացած համագործակցութիւն՝ երկխօսութիւն, գործարք, բանավէճ, ծառայում է այդ զաւթիչների իշխանութիւնն ամրապնդելուն,–նկատեր է ան:
Միակ ելքը, ըստ բանախօսի, իրական անկախութեան հասնիլն է՝ քաղաքացիական անհնազանդութեան, հասարակական դիմադրութեան միջոցով տապալելով զաւթիչներու իշխանութիւնը:

Nouvelles d'Arménie». Հայ-թրքական արձանագրութիւններ. սառեցումէն չեղեալ համարում

NEWS.am-ը որոշ կրճատումներով կը ներկայացնէ «Nouvelles d'Arménie»-ի մէջ հրապարակուած Արա Թորանեանի յօդուածը.
«2009թ. օգոստոսի 31-ի գիշերը Հայաստանն ու Թուրքիան համընդհանուր ուշադրութիւն գրաւեցին՝ հրապարակելով իրենց յարաբերութիւնները կարգաւորելու մասին ճանապարհային քարտէսը: Ատկէ երկու տարի անց, մենք կ'իմանանք, որ Թուրքիոյ նոր խորհրդարանը կը հանէ նախորդ խորհրդարանի կողմէ դեռեւս չվաւերացուած արձանագրութիւնները, որոնք Հայաստանի հետ ստորագրուեր էին 2009 Հոկտեմբերի 10-ին Զիւրիխի մէջ: Արձանագրութիւններու վերջը հաստատող այս նախաձեռնութիւնը զարմանալի չէ՝ հաշուի առնելով, որ այն Թուրքիոյ իսլամա-ազգայնական արմատականացման առաւել լայն համաթեքստի մէջ է: Սա ցոյց կու տայ, որ մենք այսօր հեռու ենք այն բազմակողմ հրապուրական ձեռնածութիւններէն, որով Անգարան զբաղած էր այն ժամանակ, երբ ԵՄ-ին իր թեկնածութիւնն աւելի ճշմարտանման կը թուէր: Սակայն այս ամէնն արդէն անցեալ է: Եւ հայկական կողմն արդէն կրնայ քաշել վարագոյրը այդ «առանց

նախապայմանների հաշտեցման» մեռելածին մոտէլի վրայ:
Ան կրնայ զայն ընել աւելի քիչ ափսոսանքով, քանի որ հրաշալի խաղցեր է այդ մերձեցման խաղը (չնայած հասարակական կարծիքի թշնամութեանը): Ատոր համար ան գովասանքի է արժանացեր, թէ՛ ռուսերուն, թէ՛ ամերիկացիներուն կողմէ: Սակայն, կարելի չէ նոյնը ըսել Թուրքիոյ մասին: Անմիջապէս, արձանագրութիւններու ստորագրումէն յետոյ, դառնալով Ատրպէյճանի բուռն արձագանգներու թիրախը՝ Թուրքիան նախ շրջադարձ, յետոյ արդիւնաւէտ ետքայլ կատարեց՝ արձանագրութիւններու վաւերացումը կապելով նոր պայմանի՝ Լեռնային Ղարաբաղի հարցէն ներս հայկական կողմի զիջումներուն հետ: Սա պահանջ էր, որ ոչ մէկ տեղ նշուած էր ճանապարհային քարտէսին մէջ: Նոյնիսկ աւելին, թրքական առաջնորդները բազմիցս ձախողեցուցին գործընթացը՝ բազմապատկելով հակահայկական սադրանքները (ժխտման քաղաքականութիւն, Թուրքիոյ մէջ բնակող հայերը վտարելու սպառնալիք, Ատրպէյճանին քաղաքական եւ ռազմական աջակցութիւն):Այս ամէնէն եզրայանգումներ կատարելով՝ Հայաստանի նախագահը 2010. Ապրիլի 22-ին յայտարարեց արձանագրութիւններու սառեցման մասին:
Սակայն, արդեօ՞ք ժամանակը չէ առաջ երթալու՝ կատարելու առաջին քայլը եւ չեղեալ յայտարարելու այդ արձանագրութիւնները:Բոլոր փոխզիջումները, որոնց գնաց Երեւանը՝ համաձայնելով բանակցութիւններ սկսիլ թուրք դահիճներու ժառանգներու հետ, կ' արդարացուէին քաղաքական տինամիկայով, որ պէտք է խթանէր այդ երկխօսութիւնը, յատկապէս՝ Թուրքիոյ քաղաքացիական հասարակութենէն ներս: Սակայն, ներկայիս ոչ միայն երկխօսութիւն չկայ, այլեւ Թուրքիոյ իշխանութիւնները առիթը բաց չեն ձգեր՝ կրակին վրայ իւղ լեցնելու համար: Բացի թրքական ազգայնականութենէն, այս իրավիճակը ակնյայտ կը դարձնէ երկու այլ իրողութիւն. առաջին հերթին՝ այլակարծութեան նկատմամբ փակ ըլլալը, ինչին կը նպաստէ աճող իսլամիզմը, միւս կողմէն՝ տնտեսական աճի բացասական հետեւանքները, որ տիրելու նկրտումներ կը ձեւաւորէ:«Մեծ քսանեակ»-ի անդամ ըլլալով՝ Թուրքիան դիւանագիտական մեծամտութիւն կը դրսեւորէ Հայաստանի , անգամ Իսրայէլի նկատմամբ, որուն ղեկավարներէն, սակայն չի վարանիր ներողութիւն խնդրել:Արձանագրութիւններու փորձը առնուազն կարող է յստակ ցոյց տալ, թէ երկուքէն ո՛վ է պատրաստ՝ զոհը, թէ դահիճը, իր ջանքերը ներդնելու երկխօսութեան համար, եւ ո՛վ կը հրաժարի ատկէ: Այստեղէն ալ Հայաստանի համար կը բխի այդ արձանագրութիւնները չեղեալ համարելու անհրաժեշտութիւնը, որոնք ոչ մէկ այլ բանի կը ծառայեն, բացի բանակցութիւններու մասին առասպելէն: Իսկ ատիկա ալ Անգարան կ' օգտագործէր՝ խոչընդոտելու Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումը: Բացի ատկէ, Թուրքիոյ արտաքին քաղաքականութեան շրջադարձին հետ կապուած գերտէրութիւնները պէտք է հետեւութիւններ ընեն իրենց ռազմավարութիւնը այդ գօտիին մէջ վերանայելու առումով: Եւ միայն Հայաստանին աջակցիլը կարող է նպաստել տարածաշրջանի հաւասարակշռութեանը, ու թոյլ կու տայ նուազեցնել օսմանիզմի վերադարձը: Քանի դեռ Անգարան չէ շտկեր իր դիրքերը: Եթէ դա հնարաւոր է»:

Արման Մելիքեան. «ՀՀ իշխանութիւնները պէտք է պաշտօնապէս ճանաչեն իրենց սխալը Արձանագրութիւնների հարցում»

PanARMENIAN.Net - Հայաստանի իշխանութիւնները պէտք է պաշտօնական յայտարարութեամբ ճանաչեն, որ Զիւրիխում ստորագրուած Արձանագրութիւնների միջոցով մասնակցութիւնը հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման գործընթացին սխալ էր, և վերջակէտ դնեն այդ գործընթացում: Այդ մասին PanARMENIAN.Net ի թղթակցի հետ զրոյցում յայտնել է ԼՂՀ նախկին արտգործնախարար Արման Մելիքեանը՝ մեկնաբանելով Թուրքիայի նոր խորհրդարանի օրակարգից Հայ-թուրքական արձանագրութիւնների բացառումը: «Մինչ այդ բաւական էմոցիոնալ տոնայնութեամբ յայտարարութիւններ եղան, թէ մենք նրանց հաւատացինք, իսկ նրանք մեզ խաբեցին: Դրանք մանկական խօսակցութիւններ են, որոնք ոչ մի ընդհանուր բան չունեն քաղաքականութեան հետ»,- նկատել է Մելիքեանը: Նա ընդգծել է, որ Հայաստանին յստակ քաղաքականութիւն է հարկաւոր ինչպէս ղարաբաղեան հիմնահարցում, այնպէս էլ Թուրքիայի հետ յարաբերութիւններում, «ինչն առայժմ չկայ, և դրա նախադրեալներն էլ չեն նշմարւում, քանի դեռ մեր իշխանութեան համակարգը նման դրութեան մէջ է»: Նա յաւելել է, որ Հայ-թուրքական արձանագրութիւնները վկայութիւնն էին այն բանի, որ Հայաստանն այդ հարցում, ինչպէս և շատ այլ հարցերում, սեփական դիրքորոշում չունի: Մելիքեանի խօսքով, հայ-թուրքական յարաբերութիւններն անպայման պէտք է կարգաւորուեն, «բայց ոչ այդ օրակարգով»: Մինչդեռ այժմ, նրա կարծիքով, թուրքական կողմը հասել է իր նպատակին՝ Հայաստանից վստահեցումներ ստանալով այն հաշուով, որ Երևանը Ցեղասպանութեան և սահմանների հարցում խնդիր չունի: «Դա միանգամայն բաւարար արդիւնք է Թուրքիայի համար այս փուլում»,- նկատել է Մելիքեանը: Օգոստոսի 22-ին Թուրքիայի Մեծ ազգային ժողովն օրակարգից 898 օրինագիծ է հանել, որոնց թւում էին նաև 2009 թուականին ստորագրուած Հայ-թուրքական արձանագրութիւնները:

Արձանագրութիւններն օրակարգից յետ կանչելու գլխաւոր պատճառ է ծառայել նոր խորհրդարանի դիրքորոշումը, որը հայ-թուրքական սահմանի բացման հարցն առաջնայնութիւնը կորցրած է համարել Թուրքիայի քաղաքական ուղու մէջ: Բացի դրանից, խորհրդարանի կանոնադրութեան համաձայն, խորհրդարանի կողմից մէկ

կիսամեակի ընթացքում չընդունուած հարցը կորցնում է իր իրաւաբանական ուժը: 2009 թուականին զուիցերիական կողմի միջնորդութեամբ Զիւրիխում Հայաստանի և Թուրքիայի ԱԳ նախարարներ Էդուարդ Նալբանդեանն ու Ահմետ Դավութօղլուն ստորագրեցին երկկողմ յարաբերութիւնների կարգաւորման վերաբերեալ Հայ-թուրքական արձանագրութիւնները: Սակայն 2010թ. ապրիլի 22-ին Հայաստանի նախագահը հրամանագիր ստորագրեց Արձանագրութիւնների վաւերացման գործընթացը կասեցնելու մասին, քանի որ թուրքական կողմը անհիմն կերպով ձգձգում էր այդ փաստաթղթերի վաւերացումը խորհրդարանում:

«Սպանութիւնների պատասխանատուն Սերժ Սարգսեանն է»

Իրաւապաշտպան Աւետիք Իշխանեանին հաւատք էր ներշնչեր մէկ տարի առաջ ՀՀ Պաշտպանութեան նախարար Սեյրան Օհանեանի այն յայտարարութիւնը, թէ ամէն ինչ ընելու է բանակին մէջ խաղաղ պայմաններու տակ կատարուած սպանութիւնները բացայայտելու համար:
«Այո, ես յուսով էի, որ ինչ-որ բան կը փոխուի, բայց փաստօրէն հիւանդութիւնն այնքան խորն է, որ նախարարը չի կարողանում շտկել իրավիճակը: Դա իր հերթին երկու բան է նշանակում՝ կամ հիւանդութիւնը շատ խորն է, կամ Սեյրան Օհանեանն այդքան լիազօրութիւն չունի իրավիճակը շտկելու համար»,- «Ա1+»-ին ըսաւ Աւետիք Իշխանեանը:
Ան կը գտնէ, որ Սեյրան Օհանեանը բանակէն ներս բարեփոխումները պէտք է սկսի սպայական բարձր կազմէն. «Սպաները պէտք է իմանան, որ զինուորի ամենափոքր վնասուածքի համար իրենք պատասխանատուություն են կրելու»: Անկախ բանակին մէջ տիրող իրավիճակէն՝ Աւետիք Իշխանեանը կը գտնէ որ. «Պատասխանատուն Սերժ Սարգսեանն է: Ամէն մի զոհի համար Գերագոյն հրամանատարից սկսած՝ ողջ սպայական կազմը պէտք է հրապարակային ներողութիւն խնդրի իւրաքանչիւր զոհի համար»:
Իրաւապաշտպան Ժաննա Ալեքսանեանը բանակին մէջ շարունակուող սպանութիւնները կը բացատրէ անպատժելիութեամբ: «Ոչինչ չի արւում բանակում սպանութիւնները կանխելու համար: Ես հետեւում եմ այդ սպանութեան գործերին. Դրանք կատարւում են առանձնայատուկ դաժանութեամբ: Դա նշանակում է, որ զօրամասերում բռնի մթնոլորտ է տիրում»,- ըսաւ տիկին Ալեքսանեանը: Իրաւապաշտպանը կը գտնէ որ Պաշտպանութեան նախարարը չի տիրապետեր

իրավիճակին, իսկ հիմնական պատասխանատուն Գերագոյն հրամանատարն է՝ Սերժ Սարգսեանը. «Սերժ Սարգսեանը պարտաւոր է հանրութեանն ասել, թէ ինչ է անում բանակում սպանութիւնները կանխելու համար»: Իրաւապաշտպան Արթիւր Սաքունցի համար, բանակին մէջ՝ խաղաղ պայմաններու տակ կատարուած սպանութիւններու պատճառն ակնյայտ է. «Բանակում կոռուպցիան հասել է այն աստիճանի, որ զինուորականները զբաղուում են ոչ թէ իրենց գործերով, այլ պիզնեսով: Միւս պատճառն այն է, որ բանակում կոռուպցիան հովանաւորուում է եւ իրենք անկարող են շտկել այդ վիճակը: Եթէ այս իրավիճակում Գերագոյն հրամանատարը ոչինչ չի անում, ուրեմն նա էլ է յանցակից այդ սպանութիւններին»:
Ա1+

Սարգսեանի թեկնածուն Սարգսեանն է

Որքան մօտենում են ընտրութիւնները, այնքան, մեր տեղեկութիւններով, սրւում է իրավիճակը Հայաստանի իշխանական վերնախաւում: Ու կռուախնձորը հերթական անգամ վարչապետի աթոռն է:
Պաշտօնին, բնականաբար, ձգտում են ոչ թէ սոսկալի անմխիթար վիճակում գտնուող տնտեսութեան վիճակը շտկելու, այլ որպէսզի օգտագործեն վերջին հնարաւորութիւնը՝ ընտրութիւններից առաջ միջոցներ ու յաւելեալ լծակ ձեռք բերելու համար:
Բացայայտ յաւակնորդները վաղուց են յայտնի՝ ԱԺ նախագահ Յովիկ Աբրահամեանը եւ Սերժ Սարգսեանի աշխատակազմի ղեկավար Կարէն Կարապետեանը:
Որքանո՞վ է այսօր վարչապետի փոփոխութեան հնարաւորութիւնը իրատեսական: Նախագահականին մօտ կանգնած մեր աղբիւրների պնդմամբ, Սերժ Սարգսեանն ամենեւին միտք չունի վարչապետ Տիգրան Սարգսեանին պաշտօնանկ անել: Հակառակը, ՀՀԿ ընտրական ցուցակը կազմուում է վարչապետի եւ Սերժ Սարգսեանի փեսայի՝ Միքայէլ Մինասեանի հետ խորհրդակցութեան արդիւնքում:

Լաւատեղեակ աղբիւրները նաեւ նկատում են, որ այս պահին Սերժ Սարգսեանի համար աւելի նախընտրելի վարչապետ, քան Տիգրան Սարգսեանն է, չկայ, քանի որ վերջինս ամբողջութեամբ ենթարկւում է նրան եւ կատարում ցանկացած յանձնարարութիւն: Եւ երկրորդ՝ վարչապետը չի օգտւում ՀՀ Սահմանադրութեամբ իրեն տրուած բաւականին լայն լիազօրութիւններից:
Իսկ ի՞նչ հնարաւորութիւններ ունի, ասենք, ԱԺ նախագահ Յովիկ Աբրահամեանը՝ վարչապետի աթոռին յայտնուելու համար:
Նա թէեւ բաւականին հարուստ է եւ ունի մեծ շրջապատ, բայց նաեւ կայ մէկ հիմնական խոչընդոտ. նա ընկալւում է որպէս Ռոպերթ Քոչարեանի թիմակից՝ ունենալով նաեւ Գագիկ Ծառուկեանի հետ խնամական կապ:
Իսկ Ռոպերթ Քոչարեանի դիրքերն ամրապնդել ընտրութիւններից առաջ, այն էլ գերլիազօրութիւններով օժտուած վարչապետի պաշտօնը նրա թիմակցին յանձնելով, Սերժ Սարգսեանի համար անթոյլատրելի է: Յովիկ Աբրահամեանը, սակայն, յոյսը չի կորցնում եւ այսօր էլ շարունակում է ստուերային ֆինանսաւորել որոշ թերթերի, որոնց նպատակն է վարչապետին հեղինակազրկելը:
Ինչ վերաբերում է Կարէն Կարապետեանին, ապա նրան անգամ հանրապետական շրջանակներում իրենց թիմակից չեն ընդունում եւ չեն ընկալում որպէս գաղափարական հանրապետական: Բացի այդ, ՌԴ-ում բաւականին վատացել են նրա եղբօր՝ Սամուէլ Կարապետեանի գործերը, իսկ եղբայրը, աւելի շուտ՝ եղբօր ֆինանսական միջոցները, Կարապետեանի առաջընթացի միակ շարժիչն են:
Մեր աղբիւրի հաւաստմամբ, Սերժ Սարգսեանի թիմում են նաեւ ուժային կառոյցների ղեկավարները: Չնայած շրջանառուող խօսակցութիւններին, որ ոստիկանապետ Ալիկ Սարգսեանը եւ գլխաւոր դատախազ Աղուան Յովսէփեանը քոչարեանական թեւից են, նախագահականի մեր աղբիւրի պնդմամբ, նրանք այսօր ամբողջութեամբ Սերժ Սարգսեանի թիկունքում են: Նաեւ սրանով է պայմանաւորուած Ռոպերթ Քոչարեանի նախագահական յաւակնութիւնների նուազումը:
Ինչ վերաբերում է ընդդիմութեանը վարչապետի պաշտօնը զոհաբերելուն, ապա մեր աղբիւրն այս հնարաւորութիւնն ընդհանրապէս բացառում է՝ նկատելով, որ այն գերլիազօրութիւնները, որ տրուեցին վարչապետին սահմանադրական փոփոխութիւններով, ընդդիմադիր վարչապետը կ'օգտագործի ամբողջութեամբ: Այդ պարագայում Սերժ Սարգսեանը կը կորցնի իշխանութիւնն ամբողջութեամբ, ինչն ուղղակի անտրամաբանական է այսօր ընտրութիւններից առաջ միահեծան իշխանութեանը տիրապետող նախագահի պարագայում:
Ի դէպ, վարչապետի՝ միւս երկու «իշխանական» թեկնածուների պարագայում էլ միահեծան իշխանութեան կորստի վտանգը բաւականին ռէալ է:
Այսինքն՝ այսօր Սերժ Սարգսեանի համար Տիգրան Սարգսեանից լաւ վարչապետ ուղղակի չկայ:
Ա1+

ՀԱՅԻ ՈԳԻՆ



Անհատներ կան, որոնք ապրում են եւ նշանաւոր են միայն նրանով, որ մի բարձր պաշտօն ունեն կամ աստիճան։ Առէք նրանցից էդ պաշտօնը կամ աստիճանը՝ կը տեսնէք՝ օխտը կորածի մինը։ Մարդիկ էլ կան, որ առանց իշխանութեան էլ, թէկուզ նոյնիսկ ձախորդութեան ու հալածանքի մէջ, միշտ երեւում են իրենց ինքնուրոյն կերպարանքով, ուժով ու շնորհքով։ Էդպէս են եւ մարդկային ցեղերը։ Պատմութիւնը ցեղեր է յիշում, որ իշխել ու նշանաւոր են եղել, քանի որ ունեցել են քաղաքական ինքնուրոյն իշխանութիւն, զէնքի զոռ ու ֆիզիկական ուժ. հենց որ կորցրել են քաղաքական անկախութիւնը, հետզհետէ հալուել են ժողովուրդների մէջ ու կորել։ Ցեղեր էլ կան, որ քաղաքական անկախ կեանքը կորցնելուց յետոյ էլ կարողացել են պահել իրենց ազգային կերպարանքը երկար դարերի ընթացքում, ամէն տեսակ հալածանքների տակ։ Իհարկէ, ծանր է եղել միշտ էս մաքառումը եւ բարոյական ու ֆիզիկական կորուստները անվերջ, բայց այնուամենայնիւ նրանք չեն կորել ու կան։ Էդ ժողովուրդներից մինն է անշուշտ մեր դժբախտ ցեղը, որ քաղաքականօրէն անկախ չի եղել գրեթէ երբեք, որ իր գոյութեան տարիներից աւելի շատ կարող է կոտորածներ համրել, եւ սակայն էսօր էլ տակաւին կայ իր լաւ թէ վատ՝ ազգային կեանքով ու կերպարանքով։
Գիտութիւնը, լուսաւորութիւնը մարդկային կեանքի պատմութեան շատ մութ տեղերի հետ միասին լոյս կը ձգի եւ մեր անցկացած երկար ու դժար ճամբի վրայ մինչեւ նրա սկիզբը, որ ինչքան թանկ է մեզ համար, էնքան էլ վեր է մեր ուժերից։ Բայց մեր ուժերից վեր հո չի նայել, քննել, ճանաչել մեր երէկն ու էսօրը։ Էսքան փորձութիւն ու տառապանք ունեցած մի ժողովրդի անվայել է անգիտանալ իր կեանքը ու ծփալ, տարուբերել ժամանակի ալեկոծութեան քմահաճոյքին անձնատուր։ Եթէ էդ դրութիւնը հասկանալի է խաւար բազմութեան համար, ներելի չի ինտելիգենցիային, որ ինչքան էլ ընդհանուր առումով խորթ լինի էս ժողովրդին իր հոգով ու կենցաղով, այնուամենայնիւ իր մէջ պէտք է ունենայ եւ ունի մարդիկ, որոնք ապրում են էդ ժողովրդի կեանքն ու պատմութիւնը։ Նրանք առաջ պէտք է անցնեն, որոնեն, ցոյց տան, թե որն է էս ժողովրդի ճանապարհը։ Մեզանում, յիրաւի, ճանապարհներ կան որոշած, բայց դրանք էս կամ էն կուսակցութեանն են կամ լրագրինը։ Ամէն ազգի մէջ կան եւ միշտ կը լինեն ամէն

տեսակի հասարակական ու քաղաքական կուսակցութիւններ ու հոսանքներ, բայց բոլորովին ուրիշ բան է ժողովրդի ամբողջութիւնը: Այո՛, լինում են դէպքեր, մի որեւէ հոսանք ուժ է առնում ու ժամանակաւոր էս կամ էն կողմը քաշում կեանքն ու մարդկանց ուշքը, բայց դրանք մոմենտներ են ամէն ժողովրդի կեանքի մէջ, որոնցից ոչ մինը առանձին վերցրած պատասխան չի տալ դրուած հարցին. եւ նա դարձեալ կը խօսի ու պատասխան կ'ուզի, թէ ո՞րն է էս ժողովրդի պատմական ճանապարհը, սրա գոյութեան խորհուրդը, ի՞նչ է կամենում սա, սրա ոգին: Եւ ուր որոնենք էդ ոգին: Արդեօք Սասունի, Զեյթունի, Մոկաց, Ղարաբաղի ու Լոռու սարերո՞ւմ, թէ՞ Շիրակի, Արարատի ու Մուշի դաշտերում...

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ
1910թ.

Անցուդարձ

ՈՒՐՈՒԿՈՒԷՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԸ ՅԱՅՏԱՐԱՐԱԾ Է, ՈՐ ՊԷՏՔ Է ՃԱՆՉՆԱԼ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ

Ուրբաթ, 9 սեպտեմբերին, Ուրուկուէյի արտաքին գործոց նախարար Լուիս Ալմակրօ Հարաւային Ամերիկայի Հայ դատի յանձնախումբին եւ Ուրուկուէյ-Հայաստան խորհրդարանական խումբին կողմէ նախաձեռնուած՝ Հայաստան-Ուրուկուէյ յարաբերութիւններուն նուիրուած համաժողովին ընթացքին, խօսելով Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին մասին, աննախադէպ յայտարարութիւն մը կատարած է:
«Այսօր մենք կ՛ուսումնասիրենք հարցը՝ պետականօրէն տեսակէտ յայտնելու համար, սակայն ես անձամբ համոզուած եմ, որ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին պատմականօրէն մաս կը կազմէ եւ պէտք է ըլլայ անկախ կամ կարճ ժամանակամիջոցին կցուի Հայաստանին: Այս է արցախեան խնդիրի միակ լուծումը», ըսած է Ուրուկուէյի արտաքին գործոց նախարարը:

Հայաստանի Ազգային ժողովի ՀՅԴ խմբակցութեան ղեկավար Վահան Յովհաննիսեան, որ համաժողովի ընթացքին կը ներկայացնէր Հայաստանի խորհրդարանը, այս յայտարարութիւնը աննախադէպ որակած է: «Առաջին անգամ առաջադէմ ու ժողովրդավար երկիր, ինչպիսին Ուրուկուէյն է, պաշտօնապէս յայտնում է մի տեսակէտ, որը վկայում է իշխող քաղաքական ուժերի դիրքորոշման մասին: Սակայն Ուրուկուէյը ժողովրդավար երկիր է, եւ այս յայտարարութիւնը դեռեւս պէտք է քննարկուի, իսկ դա որոշ ժամանակ ու աշխատանք կը պահանջի», յայտնած է Վահան Յովհաննիսեան

Թուրքիան մաքրեր է իր արխիւները Հայոց Ցեղասպանութեան մասին ապացոյցներէն

WikiLeaks-ի հրապարակած ԱՄՆ Պետքարտուղարութեան գաղտնի հեռագրերու թուին՝ կար թուրքական Սապանճը համալսարանի փրոֆեսոր Հալիլ Պերքթայի ուղերձը Ստամպուլի Ամերիկեան խորհրդին:
2004-ի Յուլիս 12-ի նամակին մէջ՝ փրոֆեսորը կը հաղորդէ ամերիկեան պետծառայողին այն մասին, որ «զտումներ են կատարուեր» Օսմանեան կայսրութեան ժամանակաշրջանին վերաբերող արխիւներուն մէջ՝ վերացնելով Հայոց ցեղասպանութեան մասին ապացոյցները: «1918թ. ի վեր արխիւները «զտուեր են» մի քանի անգամ: Առաջին անգամ ատիկա տեղի ունեցաւ, երբ Անթանթի դաշնակից ուժերը գրաւեցին Ստամպուլը»,-յայտարարեր է թուրքական համալսարանի փրոֆեսորը:
Ըստ իրեն, յաջորդ զտումը կատարուեցաւ Օզալի կառավարման օրով՝ 90-ականներու սկիզբը: Ընդ որուն, ան նշեց, որ զտումը հաւանաբար կատարեր է Թուրքիոյ պաշտօնաթող դեսպաններէն մէկը՝ Մուարեմ Նուրի Պիրկին: «Երբ նախկին դեսպանը սկսաւ հետազօտել արխիւները, ան ամէն անգամ կը հանդիպէր իր ընկերներէն մէկուն հետ, նոյն վայրը, ու անընդհատ կը կրկնէր. «Մենք իրօք սպաններ ենք զանոնք»,-կը գրէ Պերքթայը:
Ինչպէս կը հաղորդէ WikiLeaks-ը, նոյն շրջանի արխիւներուն մօտ կ'աշխատէր նաև պաշտօնաթող զինուորականներու խումբ մը, որոնց գործառոյթն էր հետազօտել հայկական հարցը:

ԱՐՑԱԽԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 20-ԱՄԵԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ. «ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԸ ՊԱՏՐԱՍՏ Է ՈՒՂՂԱԿԻ ԲԱՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՔՈՒԻ ՀԵՏ» Կ՚ԸՍԷ ՆԱԽԱԳԱՀ ՍԱՀԱԿԵԱՆ

Լեռնային Ղարաբաղի միջազգային ճանաչումը Արցախի առաջնահերթ խնդիրներէն մէկն է: Արցախի նախագահ Բակօ Սահակեան Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան անկախութեան 20-ամեակին առիթով «Նեզաւիսիմայա կազեթա» թերթին տրուած հարցազրոյցին մէջ յայտնեց, որ Արցախի անկախութեան չճանաչման իրաւական հիմքեր չկան եւ այդ հարթութեան վրայ հայկական կողմի փաստարկները անբասիր են: Ըստ անոր, այլ բան է, որ կան աշխարհաքաղաքական շարժառիթներ, տարաբնոյթ շահեր եւ այլն, որոնք քիչ մը կը յետաձգեն Լեռնային Ղարաբաղի ճանաչումը:

Ան նշեց, որ ամէն պարագայի աշխարհաքաղաքականութիւնը եւ շահերու բախումը իրենց տեղը կը զիջին իրաւունքին եւ բարոյականութեան, որուն վառ ապացոյցն է վերջին 3-4 տարիներուն ընթացքին անցեալին չճանցուած պետութիւններու ճանաչման հոլովոյթի նոր հանգրուանը:

Ըստ նախագահ Բ. Սահակեանի, Լեռնային Ղարաբաղի անկախութեան ճանաչումը չի պայմանաւորուիր արդէն ներկայ նախադէպերով. Լեռնային Ղարաբաղը պիտի շարունակէ պայքարիլ միջազգային ճանաչման համար անկախ նախադէպերէն, քանի որ անոր համար կան բացարձակապէս բոլոր հիմքերը՝ պատմական, իրաւական, քաղաքական եւ բարոյական:

Ինչ կը վերաբերի բանակցային հոլովոյթին Արցախի մասնակցութեան, Լեռնային Ղարաբաղի նախագահը շեշտեց, որ ատիկա տագնապի համապարփակ լուծման միակ կարելիութիւնն է: «Առանց մեր մասնակցութեան լուծումը անիրական է: Ատիկա կ՚ընդունին նաեւ միջազգային միջնորդները, օրինակ՝ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահները: Ստեփանակերտը պատրաստ է ուղղակի բանակցելու Պաքուին հետ եւ քննարկելու որեւէ հարց: Կը կարծեմ, որ բանակցային հոլովոյթի լիարժէք ձեւաչափի վերականգնումը իսկապէս ժամանակի հարց է եւ որքան արագ ատիկա կատարուի, այնքան կարճ ժամանակ պիտի պահանջուի

տագնապին վերջնական լուծման համար», յայտնեց Բ. Սահակեան: Ան նաեւ աւելցուց, որ Արցախը բանակցային, խաղաղ ճամբով տագնապը լուծելու կողմնակից է եւ իրմէ կախուած ամէն ինչ կը կատարէ: Իսկ Լեռնային Ղարաբաղի բանակը մարտունակ է եւ ոչ միայն երկրին անվտանգութեան երաշխաւորն է, այլեւ կայունացնող գործօն Հարաւային Կովկասի մէջ:

Մէկ ամիս ժամանակ Սերժ Սարգսեանին

«Այսօր բանակում ծառայելն աւելի վտանգաւոր է, քան փոստերում և դիրքերում գտնուելը»,- Սեպտեմբեր 6-ին յայտարարեց Հելսինքեան քաղաքացիական համաժողովի Վանաձորի գրասենեակի ղեկավար Արթիւր Սաքունցը: Ըստ իրեն՝ իրենց կողմէ կատարուած ուսումնասիրութիւններու արդիւնքով, պարզ է դարձեր, որ բանակին մէջ մահացածներուն ընդամէնը 10 տոկոսն է, որ կը զոհուի հրադադարի խախտման ռեժիմի հետեւանքով:
« 2007-2011 թուականներուն՝ բանակէն ներս 228 սպանուած զինուորներից միայն 32-ն են, որ զինադադարի խախտման ռեժիմի հետեւանքով են զոհուել»,- ըսաւ իրաւապաշտպանը:
Մի քանի իրաւապաշտպան կազմակերպութիւններու ներկայացուցիչներ Սեպտեմբեր 6-ին յայտարարեցին, որ այն , ինչ կը կատարուի բանակին մէջ, մարդու իրաւունքներու կոպիտ խախտում է. զինծառայողներու մահուան դէպքերուն առիթով յարուցուած քրէական գործերը տարիներով չեն բացայայտուիր, սպանութիւնները կը ներկայացուին որպէս ինքնասպանութիւն՝ առաջին հերթին պատասխանատուութենէն խուսափելու համար:
Իրաւապաշտպանները առաջարկեցին ստեղծել առանձին մարմին, որ շատ օպերատիւ ձեւով կը զբաղի սպանութիւններու հարցով: Անոնք նաեւ յայտարարութիւն մը հրապարակեցին, որուն մէջ մասնաւորապէս ըսուած է. *«Մէկ ամսում գործուն քայլեր չձեռնարկելու պարագայում հայկական բանակում տիրող իրավիճակի համար մեղաւոր և հովանաւոր ենք համարում ՀՀ գլխաւոր գերագոյն հրամանատար Սերժ Սարգսեանին և պահանջում նրա հրաժարականը»:*

Պատերազմը չի բացառուիր

Ըստ Ժիրայր Լիպարիտեանի, մեծ տէրութիւնները դէմ չեն ըլլար ատոր

«Չի բացառուում, որ Ատրպէյճանը Հայաստանի դէմ պատերազմ սկսի առանց մեծ տէրութիւնների համաձայնութեան»,- ըստ tert.am-ի, Turan գործակալութեանը տուած հարցազրոյցին ըսեր է Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի նախկին գլխաւոր խորհրդական Ժիրայր Լիպարիտեանը։ Ան նշեր է, որ մեծ տէրութիւն չհամարուող Ատրպէյճանը հնարաւոր է որ բանակցութիւններ կը վարէ ԱՄՆ-ի կամ Ռուսաստանի հետ՝ Հայաստանի դէմ պատերազմ սկսելու համար. «Հաշուի առնելով փակուղային իրավիճակը՝ Ատրպէյճանը կարող է որոշում կայացնել, որ պատերազմ սկսելուց բացի՝ այլընտրանք չունի»,- ըսեր է Լիպարիտեանը՝ նշելով, որ մեծ տէրութիւնները դէմ չեն ըլլար անոր որոշումին։ Անդրադառնալով հայ-թուրքական յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին՝ Լիպարիտեանն ընդգծեր է, որ կողմերն Արձանագրութիւններէն կը սպասէին աւելին, քան այդ փաստաթղթերը կարող էին տալ իրենց։ «Յարաբերութիւնների կարգաւորման եւ սահմանների բացման հետ մէկտեղ Թուրքիան ցանկանում էր լուծել Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման հարցը, իսկ Հայաստանը փորձում էր վերացնել երկկողմ յարաբերութիւնները ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման հետ շաղկապելու խնդիրը։ Մեծ հաշուով, Երեւանն ու Անգարան անկեղծ էին իրենց նպատակներում»,- ըսեր է Լիպարիտեանը՝ աւելցնելով, որ ստեղծուած իրավիճակին հիմնական մեղաւորը Թուրքիան է, որ մերժեց Հայաստանի՝ յարաբերութիւններն առանց նախապայմանի վերականգնելու առաջարկութիւնը։

Կալանաւորուած ՀԱԿ ակտիւիստը՝ Օգոստոս ամսուայ մարդ

«Չենք լռելու» երիտասարդական նախաձեռնութիւնը սահմաներ է «Ամսուայ մարդ» անուանակարգ, որուն յաղթողը յայտարարուելու է ամէն ամսուայ վերջին օրերուն: Նախաձեռնութեան տարածած հաղորդագրութենէն կը տեղեկանանք, որ անուանակարգին կարող են յաւակնիլ առաւել նշանակալից գործունէութիւն ծաւալած կամ հանգամանքներու բերումով իրադարձութիւններու կիզակէտին յայտնուած մարդիկ:

2011թ. Օգոստոս ամսուայ մարդ կը յայտարարուի երիտասարդ ակտիւիստ Տիգրան Առաքելեանը, որուն երկամսեայ կալանքը առիթ հանդիսացեր է ՀԱԿ-կոալիցիա երկխօսութեան դադարի:
«Չենք լռելու»-ն Տիգրան Առաքելեանին շուտափոյթ ազատութիւն կը մաղթէ, ինչպէս նաև կը յայտնէ, որ շարունակելու է հետևիլ հայաստանեան զարգացումներուն ու ամէն ամիս ներկայացնել իր Ամսուայ մարդը՝ անոր կատարած գործերուն, ինչպէս նաև բախտի բերմամբ կամ քմահաճոյքով, Հայաստանի իրադարձութիւններու ընթացքը փոխելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 20-ԱՄԵԱԿԻ ՁԵՌՆԱՐԿՆԵՐՈՒՆ ԾԻՐԻՆ ՄԷՋ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԲԱՑՈՒՄ՝ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՆՈՐ ՀԱՄԱԼԻՐԻՆ

Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 20- ամեակին նուիրուած ձեռնարկներուն ծիրին մէջ, Սեպտեմբեր 20-ին հանդիսաւոր բացումը կատարուեցաւ Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի գիտական նոր համալիրին: Անկախութեան 20- ամեայ նախաձեռնութիւններու շարքին ասիկա թերեւս ամէնէն կարեւորներէն մէկն է: Բացման հանդիսաւոր արարողութեան մասնակցեցան Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Բակօ Սահակեան, Ամենայն հայոց Գարեգին Բ. կաթողիկոս, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոս, արտերկրէն ժամանած պատուաւոր այլ հիւրեր եւ պատուիրակութիւններ:

Ամենայն հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսներու մասնակցութեամբ տեղի ունեցաւ նաւակատիքի արարողութիւն: Նորամուտի ծէսէն ետք Հայաստանի

նախագահ Սերժ Սարգսեան հայոց հայրապետներուն, Մատենադարանի նոր համալիրի բարերարներուն, շէնքի գլխաւոր ճարտարապետին եւ շինարարութեան կազմակերպիչին ուղեկցութեամբ շրջագայեցաւ կառոյցին մէջ, ծանօթացաւ անոր կարելիութիւններուն, մասնակցեցաւ ձեռագրատան խորանին մէջ հնագոյն ձեռագիրի տեղադրման արարողութեան:
Մատենադարանի աշխատակիցները հպարտութեամբ ցոյց տուին այն հրաշալի պայմանները, որոնք ստեղծուեցան Մատենադարանին մէջ պահուող գանձերու պահպանման, ուսումնասիրութեան, ինչպէս նաեւ վերականգնման համար:
Համալիրի բացման առիթով ունեցած իր ելոյթին ընթացքին, նախագահ Սերժ Սարգսեան Մատենադարանի նորակառոյց համալիրը գնահատեց իբրեւ Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 20-ամեակի տօնակատարութիւններուն վայել գործ:
«Երեւանը հարուստ է գեղեցիկ եւ խորհրդանշական շինութիւններով, սակայն իր էական եւ բովանդակային կշիռով Մատենադարանը անգերագնահատելի է եւ անմրցակից: Մենք այն սակաւաթիւ ազգերէն ենք, որոնք կրնան հպարտանալ 1600-ամեայ պատմութիւն ունեցող կատարեալ գիրով, որ յարատեւած է դարեր եւ այսօր ալ մեր գոյութեան հիմքերէն է: Մեր դպրութեան հազարաւոր ձեռագիր մատեանները այստեղ կը պահուին եւ կ՚ուսումնասիրուին: Մենք պէտք է պատրաստունք թուային աշխարհին մէջ մեր մշակութային ժառանգութիւնը պահպանելու գործին: Իսկ վերանորոգուած Մատենադարանին մէջ ստեղծուած են անոր համար անհրաժեշտ բոլոր պայմանները», յայտնեց նախագահ Սերժ Սարգսեան:
Անկախութեան 20-ամեակին եւ Մատենադարանի նոր համալիրի կառուցման առիթով նախագահը պարգեւատրեց խումբ մը գործիչներ: Նախագահը Սերկէյ Համբարձումեանին յանձնեց «Պատուոյ շքանշան» , իսկ կառոյցի գլխաւոր ճարտարապետ Արթուր Մեսչեանին՝ «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանը:

Մատենադարանի գիտական նոր համալիրը երեք անգամով կը գերազանցէ Մատենադարանի գլխաւոր շէնքը: Հակառակ այս հանգամանքին, գլխաւոր ճարտարապետ Արթուր Մեսչեան շինութիւնը այնպէս նախագծած է, որ նոր կառոյցը դարձած է հինի օրկանական շարունակութիւնը: Ըստ ճարտարապետին,

անով լուծուեցաւ ամէնէն հիմնական խնդիրներէն մէկը. նոր կառոյցը որեւէ ձեւով մրցակցութեան մէջ չէ հինին հետ: Մատենադարանի գիտական նոր համալիրը այլեւս իրողութիւն է, սակայն անով չեն աւարտիր Մատենադարանին վերաբերող ծրագիրները: Նախագահ Սերժ Սարգսեան յայտարարեց նաեւ, որ մինչեւ յաջորդ տարի, երբ Երեւանը ըլլայ գիրքի համաշխարհային մայրաքաղաք, Մատենադարանի վերանորոգման ծրագիրը ամբողջապէս աւարտած տեսք պիտի ունենայ:

Տիարպեքիրի Սուրբ Կիրակոս եկեղեցիի վերաւծման արարողութիւնը տեղի կ'ունենայ Հոկտեմբեր 23-ին

Տիարպեքիրի Սուրբ Կիրակոս եկեղեցիի վերաւծման արարողութիւնը տեղի կ'ունենայ այս տարուայ Հոկտեմբեր 23-ին: NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցին այս մասին հաւաստիացուցին մեր պոլսահայ աղբիւրները: Պոլսոյ Հայոց պատրիարքարանին մօտ կանգնած աղբիւրը տեղեկացուց, որ նախապէս տարածուած լուրերը, թէ պատարագը տեղի կ'ունենայ այս տարուայ աշնանը, ստոյգ են: «Ամենայն հաւանականութեամբ, Տիարպեքիրի Սուրբ Կիրակոս եկեղեցիի պատարագը կը նշուի նոյն շուքով, ինչպէս որ անցած տարի տօնուեցաւ Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցիի վերաւծումը: Ըստ լուրերուն, բազմաթիւ արտասահմանցի հիւրեր են հրաւիրուեր, սակայն Թուրքիոյ հայ համայնքի ներկայացուցիչներուն դեռեւս պաշտօնական հրաւէրներ չեն ուղարկուեր»,- ըսաւ մեր զրուցակիցը:

Շախմատը կը դասաւանդուի երկրորդ դասարաններուն մէջ

Սեպտեմբերի 1-էն «Շախմատը», որպէս հանրակրթական առարկայ դասաւանդուելու է հանրակրթական դպրոցներու երկրորդ դասարաններուն մէջ: Այդ մասին տեղեկացուցեր են ՀՀ կրթութեան և գիտութեան նախարար Արմէն Աշոտեանն ու Շախմատի ֆետերացիայի փոխնախագահ Սմբատ Լպուտեանը, Օգոստոս 30-ին տեղի ունեցած համատեղ մամուլի ասուլիսին: Նախարարը նշեր է, որ շախմատը հանրակրթական ծրագրին մէջ ընդգրկելու մտադրութիւնը քննարկուեր է դեռ երեք տարի առաջ, և շեշտեր է, որ այդ «յանդուգն» ծրագիրը կեանքի կոչելու պահն արդէն հասունցեր էր: «Այսպիսով Հայաստանը դարձաւ աշխարհում առաջին երկիրը, որտեղ շախմատը դասաւանդուելու է հանրակրթական բոլոր դպրոցներում, և ներառուել է հանրակրթութեան պետական չափորոշիչում: Գալիք տարի առարկան կը դասաւանդուի նաև երրորդ, իսկ յաջորդ տարի՝ չորրորդ դասարաններում: 2013 թուականին առարկան ամբողջ ծաւալով ներդրուած կը լինի տարրական դպրոցում»,-ընդգծեր է նախարարը: